Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՓԱՐ

19(557)
29.06.2019
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՈՒՄ ՎԱՌՎԵՑ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 7-ՐԴ ԽԱՂԵՐԻ ԵՐՐՈՐԴ ՋԱՀԸ

Օգոստոսի 5-17-ը Արցախում և Հայաստանի Հանրապետությունում «Միասնություն՝ սպորտով» կարգախոսով կանցկացվեն Համահայկական ամառային 7-րդ խաղերը: Հայաստանի Հանրապետություն-Արցախ-Սփյուռք եռամիասնության խորհրդով Համահայկական ամառային 7-րդ խաղերի ջահերից առաջինը վառվեց մեր պատմական հայրենիքում՝ Մուսա լեռան ստորոտին, երկրորդը՝ Խոր Վիրապում, երրորդը՝ Արցախի Տիգրանակերտում: Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանի հետ հանդիսավոր միջոցառմանը ներկա էին Արցախի նախագահ Բակո Սահակյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, այլ բարձրաստիճան հյուրեր: Պարգև Սրբազանն արարողության կարևորությունն ընդգծեց հայի ինքնությունը շատ բարձր պահելու առումով:

«Նման միջոցառում Արցախում անցկացնելը շատ մեծ նշանակություն ունի: Մենք ոգեկոչում ենք անցյալի փառքն ու նշում ներկայի ձեռքբերումները, արցախյան հաղթանակները: Սերունդների համար կարևոր ձեռքբերում է սա»,- ասաց Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Համահայկական 7-րդ ամառային խաղերի երրորդ ջահը վառեց 2016 թվականի ապրիլյան պատերազմի մասնակից, «Մարտական խաչ»-ի ասպետ, Պաշտպանության բանակի ավագ լեյտենանտ Արթուր Աղասյանը:

«Հպարտության և պատասխանատվության շատ բարձր զգացումով եմ առաջնորդվել: Այս ամենը պարտավորեցնող է, կարևոր խորհուրդ ունի իր մեջ»,- ասաց Ա.Աղասյանը:

Համահայկական խաղերի ջահի վառման միջոցով մեր ուժն ու կամքը ևս մեկ անգամ դրսևորող դրվագներում մասնակցող տղաների համար հայրենասիրական, ուսուցանող պատգամ է այս միջոցառումը:

«Ես ինձ ակամա զգում էի Տիգրան Մեծի զինվոր, կարծես ճամփորդում էի պատմության մեջ: Համահայկական խաղերի՝ Արցախում նույնպես անցկացնելը շատ բարձր ոգի է հաղորդելու բոլորիս: Մենք ցուցադրում ենք մեր ուժն ու միասնականությունը»,- ասաց զինվորներից մեկը:

Օգոստոսի 6-ը՝ խաղերի բացման օրը, Ստեփանակերտում երեք ջահերով կվառվի հիմնականը:

ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐՈՒՄ

Հունիսի 25-ին Արցախի Հանրապետության Նախագահի նստավայրում տեղի է ունեցել 2018-2019 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների ՀՀ եզրափակիչ փուլում դիպլոմների արժանացած Արցախի աշակերտների պարգևատրման հանդիսավոր արարողությունը:

Նախագահը շնորհավորել է աշակերտներին, նրանց ուսուցիչներին ու ծնողներին առարկայական օլիմպիադաներում ձեռք բերված արդյունքների կապակցությամբ, մաղթել նրանց խաղաղություն, քաջառողջություն ու նոր հաղթանակներ:

«Վաղը դուք եք պաշտպանելու, զարգացնելու ու շենացնելու մեր երկիրը, դուք եք լինելու նրա տերը: Շարունակեք սովորել նույն եռանդով, եղեք միշտ վստահ ձեր ուժերին, ձեր կարողություններին, եւ ամեն ինչ կստացվի», - ընդգծել է իր ելույթում Բակո Սահակյանը:

ՏԱՍԸ ՏԱՐԻ՝ ՈՐԱԿԻ ՀԱՆԱՊԱՐՀԻՆ

ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն»-ը (ՈԱԱԿ) հիմնադրման 10-ամյակի առթիվ 2019-ը հայտարարել է որակի տարի և այդ կապակցությամբ անցկացնում է մի շարք միջոցառումներ: «Որակավորումների արժանահավատ շնորհում և հավատարմագրում» թեմայով հունիսի 20-22-ը ՈԱԱԿ-ի տնօրեն Ռուբեն Թոփչյանի գլխավորությամբ կենտրոնի մասնագետների կողմից Արցախի պետական համալսարանում անցկացված համաժողովն այդ շարքից է: Մասնակցում էին հանրապետությունում գործող բոլոր բուհերի ներկայացուցիչները՝ ռեկտորների գլխավորությամբ: Համաժողովի բացմանը ներկա էր ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը:

Արցախում բուհերի հավատարմագրման գործընթացն սկսվել է անցյալ տարվանից: Այն իրականացնում է ՈԱԱԿ-ը: Կառավարության որոշմամբ բուհերի հավատարմագրման հայտագրման վերջնաժամկետը 2019-ի դեկտեմբերի 31-ն է: Դրանից հետո մեկ տարվա ընթացքում բուհերը պետք է ստանան հավատարմագրում: ՈԱԱԿ-ը մի քանի հանդիպում է անցկացրել Արցախում, ինչպես նաև բուհերի ներկայացուցիչներն են վերապատրաստվել ՈԱԱԿ-ում: Հավատարմագրման գործընթացի հերթական փուլը համընկավ ՈԱԱԿ-ի 10-ամյակի առթիվ անցկացվող համաժողովին:

Ներկաներին բացման խոսքով ողջունեց ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, որը նշեց, որ ՈԱԱԿ-ի հետ համագործակցությունը կարճ ժամանակահատվածում բուհերին դրական արդյունք է տվել: Կոնկրետ ԱրՊՀ-ն նոր ռազմավարական ծրագիր է ընդունել, դրանից բխող՝ ժամանակացույց և իրեն հռչակել որպես անընդհատ սովորող կազմակերպություն:

ԱՀ ԿԳՍ նախարար Ն.Աղաբալյանը հաճելի արարողությամբ սկսեց հանդիպումը, որը նրա խոսքով նշանավորում է Արցախում մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումների ամենակարևոր՝ ինքնագնահատման և ինքնավերլուծության փուլի մեկնարկը. «Այս փուլը պետք է մատնանշի մեր ուժեղ և թույլ կողմերը ու նաև հստակեցնի մեր հետագա անելիքները: Խորհրդանշական է, որ ՈԱԱԿ-ը իր հոբելյանը նշանավորում է Արցախում մասնագիտական կրթության որակի ապահովման գործուն մասնակցությամբ»,- ասաց նա և ՈԱԱԿ-ի տնօրենին հանձնեց նախարարության պատվոգիր և հուշանվեր:

ՈԱԱԿ-ի տնօրեն Ռուբեն Թոփչյանը շնորհակալություն հայտնեց Արցախի կրթական համակարգի ղեկավարությանը՝ բուհերի հավատարմագրման գործընթացն իր ղեկավարած կառույցին վստահելու համար: «Մենք միասին պետք է անցնենք բարեփոխումների ճանապարհը, և դա շատ մեծ պատասխանատվություն է ենթադրում»,- ասաց նա:

Համաժողովում բուհերի հավատարմագրման հանձնաժողովների անդամները ներկայացրին իրենց դիտարկումներն իրականացվող բարեփոխումների ընթացքում հանդիպող մարտահրավերների ու դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ:

Հաջորդ երկու օրերին ՈԱԱԿ-ի մասնագետները գործնական աշխատաժողովներ անցկացրին ԱրՊՀ-ականների հետ և իրականացրին փորձնական արտաքին գնահատում:

2020թ. վերջին կունենանք հավատարմագրված բուհեր: Հավատարմագրումը կրում է շրջափուլային բնույթ: Ուսումնական հաստատությունները 4-6 տարին մեկ պետք է հավատարմագրվեն: Այսպիսով մենք կունենանք մի համակարգ, որում ներդրված են անընդհատ բարելավման տարրեր: «Շատ կարևոր է բուհերի համար ապահովել անընդհատ բարելավումը և առավել կարևոր է, որ անընդհատ բարելավումը բուհի ներսում եք ստեղծում, և ոչ թե ինչ-որ մեկը դրսից պետք է անընդհատ բարելավի ձեր բուհը: Դուք ներքին մեխանիզմ կունենաք դա անելու: ՈԱԱԿ-ն էլ ընդամենը դրսից կհավաստի չորս տարին մեկ»,- ասաց Ռ. Թոփչյանը:

10-ամյակի միջոցառումները շարունակական են լինելու և կամփոփվեն հոկտեմբերին ՈԱԱԿ-ի եվրոպական ցանցի ընդհանուր համաժողովում, որը տեղի կունենա Երևանում:

ԱՐՑԱԽԸ ՀԱՂԹՈՂ ՈՒՆԻ «ՄԵՂՈՒ»-ԻՑ

Հունիսի 21-22-ը «Այբ» կրթական հիմնադրամի կողմից տեղի ունեցավ «Մեղու», «Ռուսական արջուկ» և «Կենգուրու» մրցույթների մրցանակակիրների արցախյան մրցանակաբաշխությունը: Ներկաներին շնորհավորեց ԱՀ ԿԳՍ փոխնախարար Միքայել Համբարձումյանը և ավետեց բարի լուրը. այս մրցույթներից Արցախն առաջին անգամ հաղթող ունեցավ: Նա Ստեփանակերտի Հովի. Թումանյանի անվան հ. 9 հիմնական դպրոցի 7-րդ դասարանի աշակերտուհի Շուշաննա Բալայանն է, որը հաղթող է ճանաչվել «Մեղու»-ից:

«Այբ» կրթական հիմնադրամի մրցութային ծրագրերի ղեկավար, մրցանակաբաշխությունն իրականացնող Շուշան Կարապետյանը տեղեկացրեց, որ «Կենգուրու»-ն ունեցել է 38676 մասնակից, «Մեղու»-ն՝ 35419, «Ռուսական արջուկ»-ը՝ 8006: Նրանցից 3100-ը դարձել է մրցանակակիր, որոնց թվում Արցախից՝ 240-ը: Նա հավաստագրեր հանձնեց մասնակից դպրոցներին և նրանց աշակերտներին, նվերներով տոպրակ՝ հատուկ, նաև՝ պատվոգիր, խորհրդանիշ-խաղալիք (բարձր դասարանցիներին՝ խորհրդանշանով ուսապայուսակ)՝ լավագույն մրցանակակիրներին, իսկ հաղթող Շուշաննա Բալայանին՝ նաև էլեկտրոնային գիրք, որն ընդգրկում է հայերեն և ռուսերեն 100 անուն գիրք:

Ամփոփելով անցած տարիների «Կենգուրու»-ի արդյունքները՝ կազմակերպիչներն առանձնացրել են 26 դպրոց, որոնք այդ բոլոր տարիներին մրցույթն անցկացրել են առանց կարգի խախտման, ազնիվ ու անկողմնակալ: Այդ դպրոցներից երկուսն Արցախից են՝ Ստեփանակերտի ֆիզմաթ և հ.12 հիմնական դպրոցները: Կազմակերպիչների կողմից նրանք արժանացան հատուկ մրցանակի:

Սեփ. լրատվություն

ՃԱՄԲԱՐ-2019

«ԱՍՊԵՏ»-Ը ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ Է ԼԻՆԵԼ ԱՍՊԵՏ

- Մեր նշանաբանն է՝ «Ուժն է ծնում իրավունքը»:

- Մեր նշանաբանն է՝ «Հաղթողներին չեն դատում»:

- Մեր նշանաբանն է՝ «Քաջերի սերունդները քաջեր են»:

- Մեր նշանաբանն է՝ «Լավագույն պաշտպանությունը հարձակումն է»:

- Ճամբարի կարգախոսն է՝ «Մենք հայրենիքինն ենք, հայրենիքը՝ մերը»…

Արդեն 11-րդ տարին է՝ այսպիսի պատրաստականությամբ ազդարարվում է բնության չքնաղ մի անկյունում յուրատեսակ զորանոց դարձած՝ «Ասպետ» բարձր հնչեղությամբ ռազմամարզական ճամբարի բացումը:

Ճամբարի պետի տեղակալ՝ մայոր

Արմեն Դոլուխանյանի բացման խոսքը հավաստում է ճամբարի նպատակներն ու սպասվող հետաքրքիր առօրյան: Ճամբարը ներառում է այն բոլոր միջոցները, որոնք նպաստում են զինվորական ծառայության նախապատրաստման, սաների մշակութային և ռազմական առօրյայի, հանգստի կազմակերպման աշխատանքներին:

«Ասպետ» ռազմամարզական ճամբարի մեկնարկի առիթով ճամբարականներին ողջունեց և շնորհավորեց ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը.

- Առաջիկա շաբաթների ընթացքում այստեղ նորից հարյուրավոր հայ պատանիներ Արցախից, մայր հայրենիքից ու Սփյուռքից կհամատեղեն իրենց հաճելի հանգիստը զինվորական նախնական պատրաստության վարժանքների հետ:

Այստեղ դուք պատրաստվում եք ձեր կյանքի կարևոր առաքելությանը՝ հայրենիքի պաշտպանությանը: Ձեզանից շատերը ամիսներ, ոմանք՝ մեկ տարի հետո փոխարինելու են այսօր սահմանին կանգնած մեր զինվորներին: Դուք դառնալու եք զինվորը բանակի, որը հաղթական ճանապարհ է անցել ու հպարտության զգացում պարգևել մեր ամբողջ կյանքում: Մեր բանակը ծնվել է պատերազմի թոհուբոհի մեջ, կամավորական ջոկատների հիմքի վրա, և մեր տղաները չունեին ժամանակ ու հնարավորություն՝ ամեն ինչ կազմ ու պատրաստ ունենալու: Իսկ այսօր ամեն ինչ պատրաստ է ձեր ծառայության համար: Դպրոցում դուք անցնում եք նախնական զինվորական պատրաստության դասընթացը, բայց բանակային առօրյային և բանակի կարգ ու կանոնին ձեր առաջին գործնական ծանոթությունը հենց այստեղ է կայանում: Իհարկե, այս օրերին դուք նաև հետաքրքիր ու բովանդակալից հանգիստ եք անցկացնելու. ձեզ համար կազմակերպվելու են էքսկուրսիաներ, լինելու են մշակութային միջոցառումներ, և ամենակարևորը՝ այստեղ ձեռք եք բերելու նոր ընկերներ: Գուցե ձեզանից շատերը հենց վաղը միասին կողք կողքի մարտական հերթապահություն են իրականացնելու, և հենց այսօր այստեղ է, որ առաջին անգամ լուրջ, վստահելի ընկեր եք ձեռք բերելու:

Տա՛ աստված, որ երբեք ձեզ չվիճակվի սովորածը կիրառել պատերազմական գործողություններում, և այն, ինչ սովորել եք, կիրառեք միայն վարժանքների համար: Վստահ եմ, որ կոփվելով և դժվարությունները հաղթահարելով՝ դուք պատրաստ եք լինելու նոր խոչընդոտներ հաղթահարելու:

Այն, որ «Ասպետ» ճամբարով անցած զինվորները շահեկանորեն տարբերվում են մյուսներից, փաստում են բանակի սպանները, և այդ մասին հիշեցրեց նախարարը: Առիթն օգտագործելով՝ Ն.Աղաբալյանը տեղեկացրեց նաև առաջիկա Համահայկական խաղերի մասին. օգոստոսի 6-ին Ստեփանակերտի մարզադաշտում մեծ հանդիսավորությամբ հայտարարվելու է խաղերի բացումը: Նա բոլորին կոչ արեց մասնակցել այդ շքեղ արարողությանը և երկրպագել մեր մարզիկներին: Դա կարևոր իրադարձություն է, որովհետև աշխարհի տարբեր երկրներից 7 հազար երիտասարդ այցելելու է Արցախ: Իսկական միասնության օր է լինելու, որը համախմբելու է մեզ բոլորիս:

Ճամբարականներին ողջունեց նաև ԱՀ ՊԲ բարոյահոգեբանական աշխատանքների բաժնի պետ՝ գնդապետ Նորայր Մկրտչյանը:

Նա նշեց, որ ԱՀ ուսումնական հաստատություններում նախնական զինվորական պատրաստություն առարկայի դասավանդումը և ՊԲ ռազմահայրենասիրական դաստիարակության ծրագրերն ունեն կոնկրետ նպատակներ, որոնցից առանցքային են դպրոցականներին ազգային ինքնագիտակցության գաղափարով զինելը, նրանց հայրենասիրությամբ տոգորելը, մատաղ սերնդին ազգային արժեքների ժառանգորդը դարձնելը, զինվորական գործի նկատմամբ սեր առաջացնելը: ԱՀ պաշտպանության նախարարությունն այսուհետ ևս շարունակելու է սերտ համագործակցությունը շահագրգիռ գերատեսչությունների ու կառույցների հետ և աջակցությունն այնպիսի միջոցառումների ու ծրագրերի իրականացմանը, ինչպիսիք են ռազմամարզական ճամբարների անցկացումը, հրաձգությունների կազմակերպումը, փոխադարձ այցելությունները, արիության դասերի անցկացումը, ՆՁՊ առարկայի դասարանների և հատուկ սրահների կահավորումը և այլն: «Ասպետ»-ը կարևորեց նրանով, որ այստեղ անցկացվող միջոցառումները շատ մոտ են բանակային միջոցառումներին, որոնք էլ իրենց հերթին տալիս են այն հմտություններն ու ունակությունները, որ անհրաժեշտ են ապագա զինվորին՝ մարտի դաշտում կամ ընդհանրապես խաղաղ պայմաններում զինվորական ծառայությունն անցնելու գործում, ինչպես նաև աշակերտներին հնարավորություն են տալիս ցուցաբերել ֆիզիկական և ռազմագիտության բնագավառում իրենց կարողությունները ու գիտելիքները:

ԱԱՄ «Հայրենյաց պաշտպան» երիտասարդական թևի նախագահ Անդրանիկ Գրիգորյանը կարևորեց «Ասպետ»-ը, քանի որ այն սկիզբն է լավ, խելացի, արժանապատիվ զինվոր դաստիարակելու համար: Անձնվեր, խելացի և բանիմաց, զենքին լավ տիրապետող, հանդիպակաց դժվարություններից խուճապի չմատնվող, սառը դատողությամբ ճիշտ որոշումներ կայացնելու ունակ զինվորը մարտունակ բանակի հիմքն է:

Ճամբարի պետ՝ մայոր Արսեն Հարությունյանը մեզ հետ զրույցում ասաց, որ ջոկերի ձեռք բերած ռազմակիրառական հմտություններն ու ունակությունները տեսանելի կլինեն անցկացվող մրցումներում: Հաղթող ճանաչված ջոկերն ու առանձին մասնակիցներ կխրախուսվեն ՊՆ արժեքավոր նվերներով ու պատվոգրերով: Նախատեսված են տարբեր անվանակարգերով խրախուսումներ՝ «Լավագույն հրաձիգ», «Լավագույն շախմատիստ», «Լավագույն ճամբարական» և այլն: Լավ արդյունքներ ցուցաբերած ճամբարականների համար շնորհակալագրեր կուղարկվեն համապատասխան դպրոցները:

Իրենց տպավորությունները կիսեցին ճամբարականները:

Սերգեյ Հովսեփյան. - Արդեն մի քանի օր է, ինչ մենք գտնվում ենք «Ասպետ» ճամբարում: Ինչ խոսք, մեզանից ոմանք մինչև այստեղ գալը թերևս տատանվում էին՝ լուրջ պատկերացում չունենալով ճամբարի գործունեության և դրական արդյունքների մասին: Սակայն բավական է մի քանի օր այստեղ անցկացնել՝ հասկանալու համար, թե ինչքան կարևոր է այս ճամբարը: Այն մեզ հնարավորություն է տալիս կոփվել, ծանոթանալ ապագա զինվորական ծառայության նախադրյալներին՝ նախնական պատրաստականություն ձեռք բերելու, հայրենիքի պաշտպան լինելու համար: Շատ կարևոր է և այն հանգամանքը, որ մենք այստեղ ծանոթանում ենք տարբեր դպրոցների մեր հասակակիցների հետ՝ ձեռք բերելով նոր ընկերներ: Ճամբարում մենք նաև հանգստանում ենք, կազմակերպվում են զանազան մարզական խաղեր, այցելություններ դեպի պատմամշակութային վայրեր, հուշարձաններ: Բոլորի կարծիքն արտահայտած կլինեմ, եթե ասեմ, որ այստեղ մենք շրջապատված ենք ջերմ հոգատարությամբ ճամբարի տնօրինության, զինղեկների և սպասարկող անձնակազմի կողմից: Ճամբարի դասերը նույնպես մեզ հնարավորություն կտան երկուերեք տարի հետո դառնալ հայրենիքի իսկական պաշտպաններ:

Արման Գրիգորյան. - Մեր մեջ դժվարություններից տրտնջացողներ չկան, ճիշտն ասած՝ դժվարություններ էլ չկան: Հետաքրքիր խաղեր, մրցումներ են կազմակերպվում, մեր վաշտն արդեն չորս օրում անց կացված ութ միջոցառումներից վեցում հաղթող է ճանաչվել: Թիմային զգացողությունն այստեղ ուժեղ է: Սննդի մասին էլ կարող եմ ասել, որ ամեն ինչ լավ է, համով է: Մայրիկի ճաշերին չեն զիջում: Մարզաառողջարարական միջոցառումներ են իրականացվում: Ամեն օր լողանում ենք լողավազանում: Բոլորն անչափ ուշադիր են մեր նկատմամբ: Անգամ ոտքի մի փոքր քերծվածք դուրս չի մնում ուշադրությունից: Մեկ շաբաթ ենք այստեղ անցկացնելու, բայց այն մեր կյանքում վառ հիշողություններ է թողնելու:

Թե ինչ ունակություններ են հասցրել ձեռք բերել ճամբարականներն առաջին չորս օրում, լավագույնս արտահայտվեց նրանց հանդիսավոր երթով, ապա՝ երգով շարքով անցնելով: Զինվորական հատու քայլվածքն ու պահվածքը, վաշտերի խրոխտ, հայրենասիրական երգերը դրա վառ արտահայտությունն էին:

Ճամբարականներին իրենց արվեստով շնորհավորեցին ՊԲ «Ասպետ» համույթի տղաները:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Իմ օրագրից

1989թ. ՀՈՒՆԻՍԸ

1-8.06.1989թ.: Ամեն ինչ մոռացած՝ հեռուստացույցի առջևից չենք հեռանում: Ոչ ոք չի աշխատում, կլանված դիտում ենք ժողպատգամավորների առաջին համագումարի ընթացքը: Համագումարում շիկացած վիճակ է ստեղծված, որն ավելի է հետաքրքրություն առաջացրել: Հիացած եմ Գալինա Ստարովոյտովայի և Անատոլի Սոբչակի պահվածքով, որոնք ատամներով պաշտպանում են մեզ: Գերագույն խորհրդի կազմում Բ.Ելցինին ընտրեցին: Այդժամ ելույթ ունեցավ մի այլազգի պատգամավոր իրավաբան և ցած դրեց իր մանդատը հօգուտ Բորիս Ելցինի, որն ընդունվեց: Հիացած եմ Հենրիկ Իգիթյանով, որը տեղից հայերեն դիպուկ ասացվածքով գունավորեց Մ.Գորբաչովին, իսկ նա խնդրեց թարգմանել, բայց Իգիթյանը պատասխանեց, որ այն թարգմանության ենթակա չէ:

9.06.1989թ.: Ժողդեպուտատների առաջին համագումարն ավարտեց իր աշխատանքը, սակայն Գորբաչովը դարձյալ չընդունեց մեր պատվիրակներին (մայիսի 3-ի բաց նամակի հեղինակներին): Նա մեկնեց Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն՝ խոստանալով, որ ԳՖՀ-ից վերադառնալով՝ անպայման կընդունի, սակայն օրերն անցնում են, բայց...

16.06.1989թ.: Ծննդյանս օրն է, լրացել է 60 տարիս, բայց տրամադրություն չունեմ լսել անգամ: Սակայն աղջիկներս իրենց մոր գլխավորությամբ ամեն ինչ անում են, որ նշեն: Քանի օր է՝ դպրոց չեմ գնացել, ու հանկարծ կանչում են և ուրախացնում. ծաղիկներ, հուշանվեր, քաղաքաշինության և քաղաքային արհեստանոցի կողմից պատվոգիր, իսկ Բորիս Բաղրյանն էլ իր գրչից ծնված՝ «Իմ ընկերոջ մասին» վերտառությամբ «Սովետական դպրոց»-ում տպագրված հոդվածով: Արարողությունը շարունակում ենք մեր տան բակում Թամարայիս պատրաստած «ճոխ» սեղանի շուրջը: Զրույցի ենք բռնվել՝ մոռանալով, որ մոտենում է պարետային ժամը:

19.06.1989թ.: Ստանում ենք բարի լուր: Մ.Գորբաչովն ընդունել է «Բաց նամակի» հեղինակներից 9 հոգու Նիկոլայ Ռիժկովի, Վ.Զեբրիկովի և Ա.Վոլսկու ներկայությամբ: Սրտատրոփ սպասում ենք նրանց վերադարձին: Պատմում են, որ երբ Գորբաչովի մոտից դուրս են եկել մերոնք, կատակով ընկ. Ն.Ռիժկովին ասել են. «Մենք Ձեզ հետ լրիվ կոմանդա» էինք՝ 9+1+1=11, իսկ ընկեր Ռիժկովը պատասխանել է. «Դամածայն եմ, բայց դարպասապահը Արկադի Վոլսկին էր...»: Ինչպես հանդիպման մասնակիցներն են վկայում. «...Բորիս Դադամյանը իրեն բնորոշ հումորի զգացումով Նիկոլայ Ռիժկովին հիշեցնելով թթի օղու արտադրության համար թույլտվության մասին, նրան, Մ.Գորբաչովին և Վ.Զեբրիկովին հրավիրեց համտեսել այդ խմիչքը» (Ս.Բաբայան, 2 օգոստոս 2018թ., «ԱԱ»):

27.06.1989թ.: Ստեփանակերտի Հաղթանակի հրապարակում ասեղ գցելու տեղ չկար: Հավաքվել էր քաղաքի ամբողջ բնակչությունը՝ մեծից մինչև փոքրը, եկել էին նաև շրջաններից: «Բաց նամակ»-ի հեղինակները ամբիոնի մոտ են, որոնք հերթով պատմում են Գորբաչովի հետ հանդիպման մասին: Նշում են, որ նա խոստացել է վերականգնել մարզային խորհուրդը և նրա գործկոմը, նաև՝ կուսակցության մարզկոմը: Հրապարակում աշխուժություն է տիրում: Մեր հարցի լուծման դրական հույսեր են շողում: Վաչագան Գրիգորյանը հայտնում է, որ մի խումբ դեպուտատներ դիմել են ԽՍՀՄ գլխավոր դատախազ Սուխարևին Արկադի Մանուչարովին կալանքից ազատելու հարցով: Ժողովուրդը ծափահարություններով է ընդունում: Ղարմետաքսկոմբինատի կուսկազմակերպության քարտուղար Ռոբերտ Քոչարյանն առաջարկում է ստեղծել ժողովրդական ճակատ՝ Շարժումն ավելի լավ կազմակերպելու համար (Ժող. ճակատի թռուցիկներից մեկը կցված է օրագրիս, որը ներկայացնում եմ «Լուսարար»-ին):

28-29.06.1989թ.: Գործադուլը շարունակվում է, չնայած ամեն ինչ արվում է այն դադարեցնելու, իսկ Ազերինֆորմը իր հայտարարություններով ավելի է շիկացնում դրությունը: Այսպես օրինակ՝ «...Ուժային ճնշման քաղաքականությունը, որն օգտագործում են Ստեփանակերտի որոշ շրջաններ, պաշտպանություն չի գտնում ԼՂԻՄ-ի շատ բնակավայրերում: Աշխատում են Շուշու շրջանի բոլոր ձեռնարկությունները, ամենուրեք շարունակվում են դաշտային աշխատանքները» (Ազերինֆորմ):

Այսպիսին էր 1989թ. հունիսը:

Մաղլեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Մշակույթի վաստ. աշխատող,
անհատ. թռշակառու ուսուցիչ

ՀՈԲԵԼՅԱՆ

ԲԵՂՄՆԱՎՈՐ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ



Լրացավ վաստակաշատ մանկավարժ, պատմության անխոնջ տարեգիր Մառլեն Շահնազարյանի ծննդյան 90-ամյակը: Պատկառելի տարիքով այս այրը շարունակում է մանկավարժի իր գործը՝ շփվելով կրթական համակարգի հետ, մամուլում արծարծելով հրատապ թեմաներ: Հիրավի, իսկական մանկավարժը թոշակի չի անցնում: Պատմաբանի նրա ձեռքը միշտ կյանքի զարկերակի վրա է: Նրա օրագրային գրառումները Արցախյան շարժման մասին աղբյուրագիտական նշանակություն ունեն:

Վաստակաշատ մանկավարժ-պատմաբանի գործունեությունն ըստ արժանվույն է գնահատվել. ԱՀ նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով Մառլեն Շահնազարյանը պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով: Ծննդյան օրվա կապակցությամբ կազմակերպված հանդիսության ժամանակ բարձր պարգևը նրան հանձնեց ԱՀ կրթության, գիտության և սպորտի փոխնախարար Միքայել Համբարձումյանը՝ ասելով, որ Մառլեն Շահնազարյանը իր ուրույն հետագիծն է թողել Արցախի կրթական համակարգում:

Մ.Շահնազարյանը «Լուսարար»-ի ակտիվ թղթակիցներից է: Նրա օրը օր չէ առանց թերթի: Ժամանակին Մ.Շահնազարյանը եղել է պրոպագանդիստ և կուլտուրայի վաստակավոր գործչի կոչում է ստացել այս գործունեության համար: Նա մշտապես շփվել է հատկապես գյուղական հասարակության հետ, պարզաբանել երկրի քաղաքականությունը: Այսօր էլ ակտիվ կենսադիրքում է: Նրա մանկավարժական և հասարակական գործունեությունն ամփոփվում է լրագրային ժանրում:

Հոբելյանի կապակցությամբ «Լուսարար»-ը շնորհակալագրով պարգևատրել է գրչի անխոնջ մշակին:

Մ.Շահնազարյանը պարգևատրվել է նաև Ասկերանի շրջվարչակազմի պատվոգրով՝ մանկավարժական երկարամյա անբասիր գործունեության, սովորողների կրթության և դաստիարակության գործում ունեցած մեծ ավանդի և ծննդյան 90-ամյակի առթիվ: Հանձնելով պարգևը՝ շրջվարչակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Կառլեն Մայիլյանն ասաց. «90 տարին շատ է, թե քիչ, Դուք կարող եք չափել: Բայց բոլոր դեպքերում դա այն տարիքն է, երբ ետ նայելիս բավականին արած, բայց Ձեր դեպքում նաև չարած բան ունեք: Ինչու չարած, որովհետև Դուք դեռևս այն անձնավորությունն եք. որ երիտասարդական ավյունով լցված՝ մատաղ սերնդին ու մանկավարժական հանրույթին տալու շատ բան ունեք: Անընդհատ կարելի է խոսել մարդ տեսակի Ձեր անսպառ էներգիայի մասին, մանկավարժական կարողությունների մասին: Շատ-շատերին եք դաստիարակել ու անձնական աշխատասիրությամբ վարակել»:

Մառլեն Շահնազարյան: Ծնվել է 1929թ. հունիսի 16-ին Հադրութի շրջանի Ազոխ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի յոթնամյա դպրոցում: Այնուհետև ուսումը շարունակել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում, որն ավարտել է 1950թ. և նույն թվականի սեպտեմբերից որպես դասվար աշխատանքի անցել շրջանի Դոլանլար գյուղի (այժմ՝ Արևշատ) յոթնամյա դպրոցում: 1951-1954թթ. խորհրդային բանակի շարքերում ծառայել է որպես դասակի հրամանատարի տեղակալ և զորացրվել լավագույն բնութագրությամբ ու կուսթեկնածուի տոմսով:

Որպես մանկավարժ՝ Մ.Շահնազարյանն անցել է կրթական բոլոր աստիճաններով: 1954-ից մինչև 1963 թվականը դասավանդել է Բալուջայի (Այգեստան), Մեհտիշենի (Լուսաձոր) և Խրամորթի դպրոցների տարրական դասարաններում: Նրա փորձը և հաջողությունները դարձել են «Խորհրդային Ղարաբաղ» թերթի նյութ: 1962-ին ավարտել է Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Հաշվի առնելով աշխատանքի լավ ոճն ու գիտելիքները՝ 1963թ. նշանակվում է Ասկերանի շրջանի Քարագլուխ գյուղի 8-ամյա դպրոցի տնօրեն, որտեղ աշխատում է յոթ ուսումնական տարի: 1970թ. ընտանիքը Քարագլուխից տեղափոխվում է Ստեփանակերտ, և նա աշխատանքի է անցնում քաղաքի հ.21 միջնակարգ պրոֆտեխուսումնարանում, սկզբում որպես դաստիարակ, ապա՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն: Յոթ տարի էլ աշխատելով ՊՏՈՒ-ում՝ աչքի է ընկել ստեղծագործական ու մանկավարժական փորձի դրսևորումով ու արժանացել պրոֆտեխկրթության միութենական կոմիտեի պատվոգրի: Սովորողների ինտերնացիոնալ և հայրենասիրական դաստիարակությունը բարձր հիմքերի վրա դնելու արդյունք էր, որ նախաձեռնեց «Շրջիկ-ալբոմ» նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների հ.21 պորֆտեխուսումնարանների հետ՝ նրանց հասցնելով ԼՂԻՄ-ի վերաբերյալ տեղեկատվություններ, հայալեզու լրագրեր ու ամսագրեր, մեր երկրամասը ներկայացնող լուսանկարներ՝ փոխադարձը ստանալով նրանցից: ՊՏՈՒ-ի շրջանավարտներն Արցախի բանվորական բանակը համալրելով՝ զգալի աշխատանք են կատարել մեր երկրամասի շինարարության և արդյունաբերության, գյուղատնտեսության զարգացման բնագավառում:

1977-1978 ուստարում հերթափոխային միջնակարգ դպրոցի տնօրեն էր, որտեղ 700-ից ավելի սովորող կար: Այստեղ ստեղծվել էր փոխադարձ հարգանքի ու վստահության մթնոլորտ դպրոցի մանկավարժական կոլեկտիվի և արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարության միջև, և ամեն ինչ արվել էր նորմալ ուսումն ապահովելու համար:

1978-1992թթ. աշխատել է Ստեփանակերտի հ.9 միջնակարգ դպրոցում՝ որպես արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների գծով փոխտնօրեն, պատմության ուսուցիչ: Ստեղծել է Հետաքրքիր հանդիպումների ակումբ (ՀՀԱ), որի պատվավոր հյուրերն են եղել մարզի նշանավոր անհատները՝ գրողներ, ժողդերասաններ, աշխատանքի հերոսներ, արվեստի գործիչներ, այլոք:

Հարազատ քաղաքի պատմությունը հավերժացնելու նպատակով ստեղծել է «Մեր քաղաքի հուշարձանները» ալբոմը. որտեղ զետեղել է քաղաքի 12 հուշարձանների մասին մանրամասն տեղեկություններ, լուսանկարներ և դրանք կցել դասարանների, որպեսզի խնամեն: 12 տարի ղեկավարել է դպրոցի «Արծվիկ» աշխատանքային ճամբարը Դաշբուլաղ (Աստղաշեն) գյուղում, որի անունը դուրս էր եկել մարզի սահմաններից:

Նրա առաջավոր փորձը տարածվել է, և արդյունքում հ.9 միջնակարգ դպրոցի համբավը դուրս է եկել մարզի շրջանակներից, արժանացել ԽՍՀՄ ԺՏՆՑ-ի անդամությանը:

Մ.Շահնազարյանն արդյունավետ աշխատանք է տարել նաև նոր մասնագետներ պատրաստելու ուղղությամբ: Շուրջ 10 տարի իր փորձը փոխանցել է մանկավարժական ինստիտուտի ապագա պատմաբաններին, տասնյակ անգամ հրավիրվել է ընդունելության քննություններ անցկացնելու:

1992թ. սեպտեմբերին վերադասի հրամանով բոլոր թոշակառուների հետ ինքն էլ ազատվել է աշխատանքից, բայց կարճ ժամանակ անց՝ 1993թ. փետրվարին Ասկերանի միջնակարգ դպրոցի տնօրինության կողմից աշխատանքի է հրավիրվում, իսկ նույն թվականի մարտի 1-ից էլ Ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի տնօրինությունն է հրավիրում աշխատանքի, ու նա նշանակվում է պատմության և աշխարհագրության կաբինետի վարիչ: Դա չափազանց խառը ժամանակահատված էր դպրոցի համար. չկային ծրագրեր, դասագրքեր, և նա ամեն ինչ արել է, որ պատմության ու աշխարհագրության ուսուցիչներն ստանան թեմատիկ պլաններ, պատմության «սպիտակ» էջերի մասին նյութեր: Որպես կենդանի դասագիրք՝ նյութը հասցրել է յուրաքանչյուր դպրոց: Այդ օրերին է, որ նա գրում և զինղեկներին է ուղարկում «Հայաստանի Հանրապետության բանակը 1918-1920թթ: Ազգային բանակի ստեղծումը հայ ժողովրդի արդի կարևորագույն խնդիրն է» ծրագրային կարևորագույն թեման:

1993-1994 ուստարում դասախոսել է ԱրՊՀ պատմության ֆակուլտետում: Իսկ 1995-2008թթ. Խրամորթի ու Իվանյանի միջնակարգ դպրոցների պատմություն և իրավունք առարկաների ուսուցիչն էր:

Արցախյան շարժումը հոգեհարազատ էր նրան: Հենց առաջին օրվանից ակտիվ կերպով մասնակցել է նստացույցի, երթերի, հանրահավաքներում ելույթներ ունեցել, «Կռունկ»-ի անդամ էր, հեռուստելույթներ է ունեցել. հակասաֆոնովյան հոդվածներ գրել թերթում: Պահում էր օրագիր օրվա իրադարձությունների մասին, որն այսօր ըստ ժամանակագրության տպագրում է «Լուսարար» թերթում:

20-րդ դարի Ստեփանակերտի լավագույն մանկավարժների հարյուրյակում տեղ գտած Մ.Շահնազարյանի կյանքի անբաժանելի մաս է կազմում նրա պրոպագանդիստական գործունեությունը: Հասարակության անդամների հետ ակտիվ շփումը և նրանց շրջանում պետական քաղաքականության տարածումը նրա տարերքն է: Հենց դրա համար է նա արժանացել մշակույթի վաստակավոր աշխատողի կոչման:

Խիստ ափսոսում և սխալ է համարում, որ հիմա այդ ավանդույթը չկա, երբ հեղինակավոր մտավորականները շրջում էին գյուղերով, զրուցում մարդկանց հետ, երկրի կյանքը ներկայացնում: Փորձում եմ պարզաբանել, որ հիմա այդ բոլորն անում է տեխնիկան, ամեն ինչի մասին մարդիկ արագ այնտեղից են տեղեկություն ստանում, չի ընդունում: Այդ դեպքում ինչո՞ւ են ընտրությունների կապակցությամբ լցվում գյուղերը, գիտեն, չէ՞, կենդանի շփման արժեքը, հակադարձում է նա: Ասում է՝ պետությունը ահագին ծախսեր է անում, գյուղերում համայնքային կենտրոններ կառուցում, բայց երեկոներն այնտեղ հազվադեպ մարդու կհանդիպես. ամեն մեկն իր տանն է՝ մտած համակարգիչների մեջ: Դա հեռացնում է մարդկանց իրարից: Եվ երանությամբ է հիշում այն տարիների իր և իր նմանների հեղինակության մասին, երբ ամեն տեղ նրան հարգանքով ճանապարհ էին տալիս: Այդ հարգանքը նա ձեռք է բերել իր հարուստ գիտելիքների, դրանք ունկնդրին մատչելի կերպով հասցնելու ընդունակության, ժողովրդի հետ լինելու շնորհիվ:

Նրա աշակերտներից շատերն են ընտրել սիրելի մանկավարժի մասնագիտությունը: Այսօր էլ նա նախկին սաների հարգված ընկեր Շահնազարյանն է: Բերում է օրինակներ, թե ովքեր են նրանք, որոնցից մեկն էլ ռուսաստանաբնակ բարերար Սիմոն Պետրոսյանն է, որն Արցախ այցելելով՝ առանց սիրելի ուսուցչին տեսնելու, նրա հետ իր ծրագրերը քննարկելու չի հեռանում:

Կինը՝ Թամարան, նույնպես մանկավարժ էր՝ քիմիայի մասնագետ: Չորս դուստր են մեծացրել, որոնցից երկուսը՝ Մարիետան և Նինելը, նույնպես ուսուցիչ են, ինչպես նաև՝ երկու թոռնուհիները:

Կյանքում երբեք միջակություն չսիրած մանկավարժը (հին կոմունիստ, Ազոխ գյուղի երբեմնի գյուղսովետի նախագահ հայրն է պատգամել. «Եթե պիտի լինես միջակ ուսուցիչ, ավելի լավ է չաշխատես»,- ասել էր նա) միջակ ապրելն է միշտ քարոզել, որ մարդը ագահ չլինի, վերցնի այնքան, ինչքան իրեն պետք է: Եվ երբ այսօր հակառակ փաստերի է հանդիպում, մտածում է, որ քիչ աշխատանք են տարել մարդկանց գիտակցությունը բարձրացնելու ուղղությամբ: Սխալ չհասկացվի, նա չի դատապարտում հարստանալը, բայց երբ դրան հասնում են ազնիվ ճանապարհով: «Հիմա բոլոր հնարավորությունները տրված են, որ մարդիկ հարստանան: Եթե որևէ մեկը չի հարստանում, մեղքը իր մեջ է: Բայց հարուստն էլ աղքատ հոգի չպիտի ունենա»,- ասում է նա: Մի հարցում միայն նա ագահ է. ունի 12 թոռ ու այդքան էլ ծոռ, բայց նրանց միշտ ասում է. «Իմ աչքը ծակ է այդ հարցում», ուզում եմ ավելի շատ լինեք»:

ՀԱՅՐԻԿԻՍ

Հա՛յր իմ ճերմակած, բայց ոչ ծերացած,
Փորձության ճամփով դեռ վաղուց անցած,
Դու ճիշտ չափանիշ մա՛րդ հասկացության,
Անսպառ աղբյուր՝ խղճի, բարության:
Շատ ես չարչարվել դու մանկուց ի վեր,
Քեզ բաժին ընկան շատ խորը ցավեր,
Բայց չես վհատվել, եղել ես արթուն,
Սարի պես ամուր մնացել կանգուն:
Կյանքում ապրել ես արդար քրտինքով,
Եղել հասարակ սուրբ աղ ու հացով,
Ճակատդ միշտ բաց ու դուռդ լայնքին
Շտապ օգնություն է եղել ամենքին:
Երբեք չես ձգտել դու հարստության,
Բայց ունես գանձեր ծով իմաստության,
Խոսքերը քո կիրթ, քո խորհուրդները
Գնահատել են հասկացողները:
Հարգանք ու պատիվ ունես ամենուր,
Հպա՛րտ եմ քեզնով, ի՛մ Աստվածատուր:
Օջախդ միշտ վառ անշեջ կրակով,
Ինքդ թագավոր՝ օծված սուրբ թագով:
Գահդ միշտ զորեղ, ձեռքիդ՝ գավազան,
Հոգիդ՝ դրախտի պարտեզ սրբազան,
Կաղնու պես ամո՛ւր, կյանքդ՝ դարավոր,
Քո ցա՛վը տանեմ, հա՛յր իմ թագավոր:

Ն. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՏԵՍԱԴԱՇՏ

«ԵՍ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՄ ԻՄ ՀՈՂԻ ՎՐԱ»

Արցախի ժուռնալիստների միությունում հունիսի 18-ին տեղի ունեցավ հրապարակախոս, ԼՂՀ վաստակավոր լրագրող Վարդգես Բաղրյանի «Ես կառուցում եմ իմ հողի վրա» երկլեզու գրքի շնորհանդեսը: Գիրքը նվիրված է Արցախյան շարժման նվիրյալ, Ասկերանի շրջանի Հովսեփավան գյուղի հիմնադիր Յուրի Ջհանգիրյանի կյանքին ու գործունեությանը, որը 88թ. ակտիվորեն ներգրավվելով Արցախը Մայր Հայաստանին վերամիավորելու սուրբ գործին, ցավոք, իր մահկանացուն կնքեց ադրբեջանական բանտում:

Յու.Ջհանգիրյանը լեգենդ էր դեռ կենդանության օրոք: Գյուղ հիմնել ադրբեջանական Խոջալու բնակավայրի քթի տակ, որտեղ վխտում էին օմօնականները ռուս զինվորների ուղեկցությամբ, որտեղ ամեն օր ահաբեկում էին շրջակա հայկական բնակավայրերի բնակիչներին, ամենահսկական հերոսություն էր: Նկատենք, Խոջալուն այն ժամանակ մեծ շինհարթակ էր՝ բացի ազերի գրոհայինների համար ռազմական հենակետ լինելուց: Ամբողջ Ադրբեջանն էր ներգրավված Խոջալուն կարճ ժամանակում ընդարձակելու հեռագնա ծրագրում, և Յու.Ջհանգիրյանը հանդգնեց դրա հարևանությամբ ստեղծել հայկական մի բնակավայր, որը պետք է դառնար տվյալ հատվածի համար յուրօրինակ առաջնաբերդ: Դա գյուղ չէր սովորական իմաստով, դա նոր Արցախի վերածնման խորհրդանիշն էր, մարտահրավեր՝ ուղղված Բաքվին ու Մոսկվային: Յուրի Ջհանգիրյանի հայրենասիրական գործունեության ամփոփ բովանդակությունը այսպես ներկայացրեց ԱրԺՄ նախագահը: Եվ ներկա և գալիք սերունդների կողմից պետք է արժանվույնս գնահատվի: Յու.Ջհանգիրյանն իր մեջ մարմնավորում էր հայի լավագույն որակները. նա գիտնական էր, տնտեսական օրինակելի ղեկավար: Ունեցած հնարավորություններով կարող էր իր համար բարեկեցիկ կյանք ապահովել ուրիշ տեղ, բայց չլքեց ծննդավայրը:

Բոլոր կարևոր ճանապարհներն այդ ժամանակ անցնում էին Խոջալուով, ինչը Ադրբեջանի հեռագնա քաղաքականությունն էր: Շարժման տարիներին անհնար էր Խոջալուով անցնել: Եվ Յուրի Ջհանգիրյանը, վտանգի ենթարկելով իր և որդիների կյանքը, գնաց այդ քայլին՝ ադրբեջանական որջին դեմ-հանդիման կանգնեցնելու հայկական գյուղ: Գրքում մանրամասներ կան այդ մասին: Նրա հեղինակ Վ.Բաղրյանն անգնահատելի է համարում Յու.Ջհանգիրյանի ձեռնարկը, չնայած ազերիների կոշտ զգուշացումներին: «Ես իմ հողի վրա եմ կառուցում»,- ասում էր նա: Այսինքն՝ պատերազմ էր մղում առանց զենքի: Նա առաջին իսկ օրից է անդամագրվել Ղարաբաղյան շարժմանը, եղել է նրա ամենաակտիվ մասնակիցներից մեկը, «Կռունկ» կոմիտեի անդամ էր: Ուսուցչուհի կինը՝ Ռոզա Սարգսյանը, նույնպես ներգրավված էր Շարժման մեջ: Պահպանվել են այն կադրերը, որտեղ նա 88-ի մարտի 8-ին ելույթ է ունենում Հուշահամալիրում:

Գիրքն ստեղծելուն Վ.Բաղրյանին օգնել են Յու.Ջհանգիրյանի դստեր՝ Էլմիրայի հուշերը: Այդ իմաստով Վ.Բաղրյանը նրան գրքի համահեղինակ է համարում: Օգտվել է նաև հրապարակի վրա եղած վավերագրերից: Ինչպես խոստովանում է, դժվար է եղել իր համար թեպետ ծավալով փոքր այդ գրքի ստեղծումը, չնայած մինչև Շարժումն էլ ճանաչում էր իր հերոսին լրագրողական և հետագայում՝ բարեկամական կապերով: Դժվար էր, որովհետև շատ հուզական էր ստացվում. այդ ընտանիքը ողբերգական ճակատագիր է ունեցել: Աննկարագրելի կտտանքներով ազերիները Յու.Ջհանգիրյանին տանջամահ են արել: Որոշ ժամանակ անց Հյուսիսային Կովկասում սպանվել են նրա երկու որդիները՝ Սամվելն ու Կարենը: Ռոզա մայրիկը չդիմացավ վշտին: Բայց նույնիսկ այդ ողբերգականության մեջ հերոսություն կա, նկատեց հեղինակը. «Յու.Ջհանգիրյանի ամբողջ գործունեությունը մի անուն ունի՝ հայրենիք և հայրենասիրություն»: Ըստ հեղինակի՝ նրան ամենից շատ բնութագրում է իր նամակը, որ գրքում մեջբերել է: Վ.Բաղրյանն այն համոզմանն է, որ հերոսներին ժամանակի մոռացությունից փրկելը գրողների, լրագրողների պարտքն է, և կոչ է անում շարունակել այդ գործը, քանի որ, ցավոք, տեսադաշտից դուրս են մնացել շատ արժանավորներ:

Գրքին մեծ արժեք են հաղորդում լուսանկարները, որոնց հեղինակը Ասկերանի «Բերդ» թերթի խմբագիր, լուսանկարիչ Վալերի Պետրոսյանն է: Նա ներկա է եղել Յու.Ջհանգիրյանի կատարած գրեթե բոլոր գործերին: Ցավոք, բոլոր լուսանկարները չեն պահպանվել: Նա պատմում է, որ Յու.Ջհանգիրյանը գրեթե չէր նստում աշխատասենյակում: Բոլորի հետ հավասար աշխատում էր: Վ.Պետրոսյանն առանձնացրեց նրա կազմակերպչական տաղանդը: «Ոչ միայն մտածել է, խոսել, այլև կառուցել է: Շարժմանը շատերը միայն խոսել են: Իսկ նա ուրիշ ճանապարհ էր ընտրել. կառուցման, վերաբնակեցման, բնակչությունը ավելացնելու: Եթե այդ ճանապարհով գնայինք, գուցե մեր կարգավիճակն ուրիշ կլիներ»,- այսպես է մտածում Վալերին:

Շնորհանդեսին ներկա էր բանաստեղծ Սոկրատ Խանյանը, որը, շնորհավորելով գրքի առիթով, շնորհակալություն հայտնեց բոլոր այն մարդկանց, ովքեր մեր պատմությունը կտակում են սերունդներին: «Յուրիի անունը կենդանության ժամանակ դարձել է այն աստղերից, որ լուսավորելու են մեր ճանապարհը»,- ասաց նա և իր սրտի խոսքը համեմեց նրա մասին գրած իր բանաստեղծությամբ:

Յու.Ջհանգիրյանի զավակներից այսօր մնացել է միայն դուստրը՝ Էլմիրան, որը մինչև Շարժումն ամուսնացել և ապրում է Մոսկվայում (ամուսինը միջազգային ճանաչում ունեցող գիտնական է, դոկտոր, պրոֆեսոր էներգետիկայի գծով): Նա իրենց գերդաստանի անդամների հետ ամեն տարի այցելում է Արցախ: Այս անգամ էլ եկել էր դստեր՝ Դիանայի, Կարեն եղբոր այրու և որդու՝ Արթուրի, մյուս զարմիկների հետ: Նրա նպատակն է, որ հոր գործը շարունակեն իրենց տոհմի ժառանգները:

Էլմիրան պատմում է, որ երբ սկսվեց Շարժումը, հոր հորդորով ընտանիքով վերադարձավ Երևան, իսկ ամուսինը Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանի գլխավոր կոնստրուկտորն էր: Էլմիրան Արցախյան շարժման բոլոր դժվարություններն իր ժողովրդի հետ տարել է: Բազմիցս հարձակումները հոր հիմնած գյուղի վրա, երիտասարդների սպանությունները պարզորոշ ասում էին, որ թուրքերի թիրախում հայրն է: Իր եղբայր Կարենը վիրավորվել էր, բայց ո՛չ իր արցունքները, ո՛չ մոր հորդորները չկարողացան ստիպել հորը ժամանակավորապես թողնել գյուղը: Նա ասում էր. «Դա ազնի՞վ է, ես մարդկանց հրավիրում եմ այստեղ ապրելու, իսկ ես գնամ ուրիշ տեղ, ոչ, ես կմնամ նրանց կողքին»: Եվ մի ձեռքին բահ, մյուսին՝ զենք, նա կանգնած էր բոլորի հետ:

Շնորհանդեսից հետո տեղի ունեցավ հանդիպում Հովսեփավանի հիմնական դպրոցում, որը կրում է Յուրի Ջհանգիրյանի անունը: Տնօրեն Անահիտ Գրիգորյանն ասաց, որ հպարտ են Յու.Ջհանգիրյանի սկսած պատմության մաս կազմելու համար: Ուսուցչական կոլեկտիվն աշակերտներին ուսուցանում է նրա կյանքի գործը, նրա հայրենասիրությունը: Ի հավաստումն դրա՝ դպրոցականներն արտասանեցին, կատարեցին հայրենասիրական երգեր, պարեցին:

Յու.Ջհանգիրյանը գյուղի կառուցման հարցում միշտ խորհրդակցում էր Նորագյուղի «Հաղթանակ» կոլվարչության նախագահ Արշավիր Գալստյանի հետ: Վերջինս ոգևորվել էր նրա այդ նախաձեռնությամբ, ուրախացել, որ Նորագյուղը մենակ չի լինի Խոջալուի դեմհանդիման:

«Եթե նա ողջ լիներ, ուրիշ կերպ կդասավորվեին գործերը: Մտադիր էր գյուղում բացել գյուղմթերքների վերամշակման գործարաններ, բնակչության թիվը դարձնել մի քանի հարյուր մարդ, գյուղը դարձնել ինքնաբավ: Բայց դարձավ իր անվախության զոհը: Ես նրան միայն մի բանում եմ մեղադրում. հերոսը պետք է կարողանա նաև իրեն պահպանել՝ սկսած գործը մինչև վերջ հասցնելու»,- ասում է Արշավիր Գալստյանը: Նա պատմեց, թե ինչպես է գյուղը կնքվել Հովսեփավան: Հովսեփը նրա հոր անունն էր, որ նաև սուրբ անուն է:

Ոչ միայն գյուղ հիմնադրելն է հերոսություն, այլև այն պահպանելը: Այս տարի լրանում է Հովսեփավանի հիմնադրման 30-ամյակը: Գյուղում այսօր գրանցված է 187 բնակիչ, դպրոցում սովորում է 25 աշակերտ: Դա բավական հեռու է նրա հիմնադիրի երազանքից: Համայնքի ղեկավար Խաչիկ Պետրոսյանը այդ խնդիրը լուծելի է համարում, եթե երիտասարդներն ապահովվեն բնակարանով և աշխատանքով:

Յու.Ջհանգիրյանի ժառանգները միշտ սպասված հյուր են այստեղ և աջակցում են դպրոցին՝ ինչով կարող են: Այս անգամ էլ նրանք բերել են գրքեր գրադարանի համար, երաժշտական բարձրախոս: Դուստրը դպրոցին, որպես ամենաապահով տեղ, պահ տվեց նաև Յու.Ջհանգիրյանի անձնական իրերից, նրա նամակները: Տնօրենը հավաստիացրեց, որ աչքի լույսի պես կպահեն, իսկ համայնքի ղեկավարն ակնարկեց շինության, որը Յու.Ջհանգիրյանի համար գրասենյակ էր ծառայում, տուն-թանգարան դարձնելու մասին:

Այս հողն ազատագրելու և այն բնակավայր դարձնելու համար շատ թանկ գին է վճարվել: Անդրադառնալով Յուրի Ջհանգիրյան անհատի կերպարին՝ վերստին հաստատվեց, որ Հովսեփավանը նրա կենդանի հուշարձանն է:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՐԱԺԵՇՏ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻՆ

Օրերս Ստեփանակերտի հ.2 պետական մանկապարտեզում կայացավ «Արծիվ» խմբի սաների «Հրաժեշտ մանկապարտեզին» տոնական միջոցառումը: Խմբի գլխավոր դաստիարակը՝ ընկեր Բելան (ինչպես նրան երեխաներն են կոչում) հնչեցրեց իր սանիկների անուն-ազգանունները (14 տղա, 14 աղջիկ): Կարմիր ու սպիտակ հագուկապի, փուչիկների համադրությամբ իրենց պարզ ժպիտներով փոքրիկ շրջանավարտները

ներկաներին ողջունեցին մանկապարտեզի բակում:

Անչափ գեղեցիկ էր 5-ամյա սաների ավարտական վալսը, որից հետո բացման խոսքով հանդես եկավ խմբի սան փոքրիկ Եվան: Այդ հրաշք բալիկների թոթովախոս բառերը բխում էին նրանց հոգու խորքից: Ավարտական խմբի սաները մեծ հուզմունքով ու սրտի թրթիռով կատարեցին նաև «Հայրենյաց պաշտպան» երգը: Ներկաներին զվարճանք ու միաժամանակ մեծ զարմանք պատճառեց ֆլեշմոբը: Փոքրիկները բացի երգելուց ու պարելուց հանդես եկան անչափ հետաքրքիր բեմականացմամբ: Փոքրիկ Ադելան հրաժեշտ է տալիս իր տիկնիկին՝ ասելով, որ արդեն եկել է դպրոց գնալու ժամանակը, որ պետք է պայուսակ վերցնի, որում այդուհետ կլինեն ոչ թե խաղալիքներ, այլ գրենական պիտույքներ: Սաներից Մարկն էլ Այբբենարանն էր, որն ընկերներին խոստացավ բացել նրանց առաջ իր բոլոր գաղտնիքները, ծանոթացնել տառերի խորհրդավոր աշխարհին:

Ապագա դպրոցականներն իրենց սրտի խոսքը հղեցին դաստիարակներին, մանկապարտեզի տնօրենին, փոխտնօրենին, խոհարարներին: Նրանք հասցրին խոսել նաև իրենց ապագա մասնագիտության մասին, թե ինչ են երազում դառնալ, երբ մեծանան. Գոռը՝ նախագահ, Մարգարիտան՝ մանկապարտեզի տնօրեն, Ալիսան՝ ուսուցչուհի և այսպես շարունակ:

Երիտասարդ ու ջանասեր ուսուցչուհին՝ ընկեր Բելան, ջանք չէր խնայել միջոցառումն իսկական ու անմոռաց տոնի վերածելու համար: Իր սանիկներին առաջինը հենց ինքը շնորհավորեց. «Ի՛մ փոքրիկներ, միշտ հիշեք, կանցնի ամեն դժվարություն և կդառնա հիշողություն, դուք եք մեր սերն ու լույսը, հայոց ազգի անմար հույսը, ի՛մ բալիկներ, ցտեսություն»:

Բարեմաղթանքի խոսք հնչեցրին նաև տնօրեն Նինա Լազարյանն ու փոխտնօրեն Ռենա Բարխուդարյանը:

Ամենավերջում փոքրիկ Գոռն ու Մարգարիտան օդ թռցրին ճերմակաթույր աղավնիներին:

Տա՛ Աստված, որ երկինք բաց թողնված փուչիկներն ու ճերմակ աղավնիները նրանց անհոգ ապագայի ավետաբերը լինեն:

Թամար ՂԱՐԱԽԱՆՅԱՆ
Ծնող

ԿՈՄԻՏԱՍ-150

ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՃԱՐԸ

Հայ ժողովրդական երգը հանձին Կոմիտասի գտել է իր ամենացայտուն վարպետին: Այն ուսանելի է շատ տեսակետներից: Եվ հայ երաժշտության զարգացման նախանձախնդիր ամեն ոք նախ պետք է լիովին ուսումնասիրի ու հասկանա Կոմիտասին ու նոր միայն սկսի ստեղծագործել:

Պրոֆ. Թ. Հարտման

Կոմիտասն, արդարև, մեծագույն հայ է, որի համար իր այնքա՜ն պաշտած և այնքա՜ն հզորությամբ տիրապետած երաժշտությունը մեծ ու հոգեցունց միջոց էր ժողովրդի գոյատևման, ինքնորոշման և առաջընթացի համար: Շատ խոր ու լայն է երաժշտության կոմիտասյան ըմբռնումը: Երաժշտության մեջ նա տեսնում էր ոչ միայն իր ժողովրդի կյանքի ու ներքնաշխարհի արտացոլումը, այլև այն հզոր զենքի առկայությունը, որով կարելի է դաստիարակել մարդու ներքին աշխարհը, նույնիսկ փոխել նրա կյանքը. «Մեկ հասկցված, անկեղծ ձայն հազար ճառ կարժեր, որովհետև ճառը պետք է մարսե հասարակությունը, որ կարենա անկե սնունդ առնել, ինչ-որ ժամանակներու գործ է, իսկ ձայնը վայրկյանին մէջ կթափանցե մարդուն կուրծքեն ներս և այնտեղ կհիմնե զգացման և մտքի վառարան»:

Անդուլ ու անդադար աշխատեց Կոմիտասն իր ժողովրդի համար, մինչև վրա կհասներ եղեռնական վախճանը:

Եվ այդ վախճանը հասավ այն պահին, երբ նոր էր վերադարձել Փարիզում գումարված միջազգային համաժողովից, որտեղ գերագույն հաղթանակ էր տարել: Պոլսի «Ազատամարտ» թերթի թղթակցի հետ ունեցած իր զրույցում Կոմիտասն ասում է. «Իմ հայտնած տեսություններս հայ հոգևոր և գեղջուկ երաժշտության մասին նորություն էին մանավանդ անոնց համար, որոնք տարի մը առաջ կանգիտանային կամ կմերժեին հայ ինքնուրույն երաժշտության մը գոյությունը: Հետո շատերը, որ հայ երաժշտության մասին հարևանցի գաղափար մը ունեին, դասախոսություններե ետքը առաջինը եղան խոստովանող, որ հայ երաժշտությունը գեղարվեստական բարձր արժեք մը կներկայացնե...»:

Իր առաքելական ուղիով անխոտոր ընթացող Կոմիտասը եղավ նաև ուսուցիչ՝ այս բառի բացառիկ տարողությամբ: Երաժշտության մեջ ներդրած անհուն նվիրումով նա կարողանում էր հոգիներ հեղաշրջել, նոր աշխարհաճանաչում դաստիարակել մարդու մեջ և դրանով բոլորին դարձնել իր գործի ու ձիրքի ջերմեռանդ խնկարկուներ:

Կոմիտասը սրբազան առաքելությամբ եղավ ոչ միայն հայ երաժշտության Մաշտոցը և հայ հոգու Նարեկացին, այլև մեծ ոգեշնչողն իր գործը շարունակողների համար:

Կոմիտասը բառիս բուն իմաստով թողեց իր ավանդներն ամենքին, շուրջն ավելի սերտորեն ու անմիջականորեն հավաքվածները դարձան նրա մոգական ուժի ենթակաները: Դրանք իր հինգ սաներն էին ու նաև ուրիշները, որ շփվեցին հետը:

Իր հինգ սաներն էին Վաղարշակ Սրվանձտյանը, Հայկ Սեմերճյանը, Բարսեղ Կանաչյանը, Վարդան Սարգսյանը, Միհրան Թումաճանը: Սեմերճյանը, որ շատ էր օժտված երգելու ձիրքով, շուտ հեռացավ երաժշտական ասպարեզից, մյուս չորսն իրենց ողջ կյանքի ընթացքում եղան մեծ ուսուցչի ավանդների տարածողներ աշխարհի բոլոր ծագերում: Նրանք շարունակեցին հավաքել ու ձայնագրել հայ երգը և հնչեցնել բազմաթիվ երգչախմբերի միջոցով:

Հազար անգամ իրավացի էր Միհրան Թումաճանը. «Ահա այսօր անցած հարյուր տարիներու հոգեպարար այս հևքը, կաթի ու արյունի փոխակերպված, կուրծքերուն տակ կբաբախե այնպիսի ուժգնությամբ, որ այլևս ո՛չ դուլ ունի, ո՛չ դադար, և գալիք հարյուրավոր տարիներու հոլովումի ընթացքին ի նոր հասակ նետող մեր զավակները երանի պիտի տան այն երանելի օրվան, որ Կոմիտաս ծնավ»: Հայ ժողովուրդը երջանիկ է Կոմիտասով: Վերջինս իր երաժշտագիտական խոր ուսումնասիրություններով և ստեղծագործական բացառիկ ձիրքով հայտնություն էր Եվրոպայի համար դեռ այն ժամանակ, երբ եկավ Գերմանիա՝ ուսանելու:

Գերմանական խոշոր երաժիշտների կողմից Կոմիտասին տրված գնահատականներն այդ են ապացուցում: Ահա դրանցից մեկը. 1898թ. Համբուրգի երաժշտանոցի ավարտական հանդեսին ներակայացնելով Կոմիտասին՝ Ռիխարդ Շմիդտը պարծանքով բացականչել է. «Կոմիտասն արդեն մի վարպետ է, ես հպարտանում եմ նրանով...»:

Մի ուրիշ օրինակ. 1899թ. հունիսին, երբ Կոմիտասը դեռ ուսանող էր, Բեռլինում հիմնադրվում է միջազգային երաժշտական ընկերությունը, որը նրան հրավիրում է իր անդրանիկ համաժողովում զեկուցում կարդալ «Հայոց եկեղեցական ու ժողովրդական երաժշտությունը» թեմայով: Այսպիսի մի համաժողովում զեկուցելու համար հրավեր ստանալն ինքնին հաճելի է ու զարմանալի, իսկ երբ զեկուցումից հետո ընկերության խնդրանքով այն կրկնվում է, երևույթի մեծությունը կրկնապատկվում է: Այսպես, դեռևս 1899-ից իր «բարձր ու զարգացած քաղաքակրթության վսեմ կարողությունը» Արևմուտքին ճանաչել տված Կոմիտասը հետագա տասնհինգ տարիներին անվերջ ու անընդմեջ շարունակում է այդ առաքելությունը, որով իր մեծագույն նպաստն է բերում համաշխարհային երաժշտական արվեստին:

Կոմիտասյան վսեմ արվեստի բարերար ներգործության մասին շատերն են արտահայտվել, հիացմունքի իրենց խոսքն ասել:

Այս իմաստով առավել արժեքավոր է մեծ գրող ու երաժշտագետ Ռոմեն Ռոլանի բարձր գնահատականը: Վերջինս առաջին անգամ Կոմիտասին հանդիպել ու ճանաչել է 1906թ.: Ժամանակին նա ունկնդրել է կոմիտասյան երգերը, գերվել նրանց գեղեցկությամբ:

Կոմիտասի ստեղծագործության համաշխարհային նշանակությունը հիմնավորող փաստերը շատ են ու անթիվ: 1906թ. դեկտեմբերի 1-ին Կոմիտասի՝ Փարիզում տված մեծ համերգի թողած տպավորությամբ ֆրանսիացի նշանավոր երաժշտագետ Լուի Լալուան գրել է. «Ոչ ոք ինձ չի կարող մեղադրել չափազանցության մեջ, եթե ասեմ, որ այդ համերգը մի հեղաշրջում էր և իր հայտնությամբ զարմացրեց մեզ: Ներկա եղողներից ոչ ոք պատկերացնել չի կարող այդ արվեստի գեղեցկությունը, որն ըստ էության ո՛չ եվրոպական է, ո՛չ արևելյան: Բայց եզակի է իր տեսակի մեջ: Սքանչելի, քաղցրահնչյուն, խորապես հուզական, չափավոր քնքույշ այդ մեղեդիները նրբակերտ են ու ավարտված: Ճկուն ու կենդանի ռիթմերի առատությամբ հարուստ երաժշտություն է դա՝ կարծես հենց սրտի խորքից խոսելիս լինի որպես սառնորակ, վճիտ, արևաշող հոսանք...»:

Այդ նույն համերգից հետո է, որ Կլոդ Դեբյուսին (Ֆրանսիա) հուզված բեմ է բարձրացել, ծունկ չոքել Կոմիտասի առաջ, համբուրել նրա աջը ու բացականչել. «Հանճարե՛ղ հայր Կոմիտաս, Ձեր երաժշտական հանճարին առջև կխոնարհվիմ»:

Կարո՞ղ էր նման վերաբերմունքը եվրոպական հուզմունքի, վաղանցիկ տպավորության արտահայտություն լինել: Իհա՛րկե՝ ո՛չ:

Դեբյուսին խորապես գնահատել է Կոմիտաս-ստեղծագործողի արժանիքներն ու նշանակությունը նույնիսկ համաշխարհային երաժշտական արվեստի մեջ: Եվ հանրահայտ դարձած այն գնահատականը, թե՝ «Եթե Կոմիտասը գրեր միայն «Անտունին», այդ էլ բավական կլիներ նրան խոշոր արվեստագետ համարելու», ամենևին էլ պատահական չէ ու զարմանալի: Ի դեպ, գնահատելով Կոմիտասի հանճարը, գործնականում նա շատ բան է արել՝ հանրաճանաչ դարձնելու նրա ստեղծագործությունները:

Կոմիտասով անվանի շատ երաժիշտներ, երաժշտագետներ են հիացել, հպարտացել և ուրախացել. Վենսան դը Էնդի, Ռուսել, Գաբրիել Ֆորեն, Օբրի, Սեն-Սանս, ուրիշներ:

Ռուս կոմպոզիտոր Չերեպինը Կոմիտասի երգերին ծանոթանալուց հետո գրել է. «Որքա՜ն պիտի ուրախանար Մորիս Ռավելը՝ լսելով այս երգերը»:

Նա չգիտեր, որ Ռավելը նույնպես 1906-ին և հետո մի քանի անգամ լսել էր Կոմիտասին և հիացել նրա ստեղծագործությամբ ու կատարողական արվեստով:

Այս օրերին, երբ դպրոցներում, մշակույթի օջախներում, ուսումնական հաստատություններում անցկացվում են բազմաբնույթ միջոցառումներ՝ նվիրված Մեծն երաժշտագետի ծննդյան 150-ամյակին, արվեստի, երգի, երաժշտության սիրահարները նորից ու դարձյալ համոզվում են, որ Կոմիտասը եղել և մնում է ազգի պաշտելի, անչափ սիրելի, երևելի զավակներից մեկը, որով կարող է պարծենալ ու հպարտանալ ամեն հայ: Ու՝ ոչ միայն: Լինի Արցախում թե Հայաստանում, Սփյուռքում թե Ռուսաստանի Դաշնությունում:

Միքայել ԲԱԼՅԱՆ
Թոշակառու ուսուցիչ

ԱՍԿԵՐԱՆԻ ՀԱԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ 16-ՐԴ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻՆ

Հունիսի 27-ին Ասկերանի Հայ Ավետարանական Ընկերակցության մանկապարտեզում հրաժեշտի ցերեկույթ էր: Մանկապարտեզի 16-րդ թողարկումը հրաժեշտ է տալիս հարազատ դարձած օջախին, որտեղ նրանք առաջին անգամ հաղորդակից են դարձել զարմանահրաշ Երկիր մոլորակի առեղծվածային գեղեցկությանն ու հրաշալիքներին, ձեռք բերել առաջին ընկերներին: Իսկ այսօր հրաժեշտ են տալիս՝ նոր կրթօջախ ոտք դնելու, նորանոր բաներ սովորելու...

Ողջունելով սանիկների հարազատներին՝ դաստիարակ Իննա Հարությունյանը հուզմունքով նշեց, որ սա արդեն իր 6-րդ թողարկումն է, և ամեն անգամ դեպի ուսումնառության նոր փուլ ճանապարհելով փոքրիկներին, հուզմունքով է լցվում, միաժամանակ հույսեր փայփայում, որ նրանցից յուրաքանչյուրն իր արժանի տեղը գտնի կյանքում:

Գեղեցիկ և օրվան համահունչ զարդարված դահլիճը, դեպի մանկական անհոգ մոլորակ տանող երգն ինքնին տրամադրող էր և խոստումնալից միջոցառման մասին էր ակնարկում: Դահլիճի կենտրոնում ծաղկի մեջ թաքնված աղջնակն ազդարարում է միջոցառման սկիզբն ու արտահայտում բոլոր երեխաների և համայն մարդկության փափագը՝ բոլորն աշխարհ են գալիս ուրախ և խաղաղ կյանքով ապրելու համար: Երեխաների արտասանությունները սիրելի մանկապարտեզի, ծնողների, մայր լեզվի, Արցախ աշխարհի, նրանց նվիրական երազանքների մասին էին.

Մենք ուզում ենք, որ աշխարհում
Բարին միայն թագավորի:
Մենք ուզում ենք, որ աշխարհում
Խաղաղությունը թևածի:

Սա է մանուկների արդարացի պահանջը՝ աչքի լույսի պես պահել ու պահպանել ամբողջ աշխարհի խաղաղությունը:

Անկասկած, երեխաներն այս տարիների ընթացքում շատ բան են սովորել մանկապարտեզում՝ հաշվել, արտասանել, երգել, պարել, և որ ամենակարևորն է, ճանաչել Հայրենիքը՝ Արցախ աշխարհը, լինել նրա նվիրյալ զինվորիկն ու ապագան կերտողը: Այդ են թերևս վկայում երեխաների հայրենասիրական երգերն ու պարերը:

18 տղա և 18 աղջիկ պատրաստ են ոտք դնել դպրոցի շեմին. նրանք ոչ միայն երգեցին ու պարեցին, այլև վարպետորեն ներկայացում ցուցադրեցին, իրենց շնորհակալությունը հայտնեցին սիրելի դաստիարակներին, խոհարարին, բուժքրոջը, տնօրենին, ամրակուռ կառույցի ողջ անձնակազմին, իսկ «Արցախ՝ դու մեր տուն...» երգի ներքո երեխաները շուրջպար բռնեցին՝ ազդարարելով հանդեսի ավարտը:

Մանուկների շատ սիրելի Իննա և Մարո քույրերն այսօրվա պես հիշում են, թե ինչպես են երեխաներն առաջին անգամ ոտք դրել մանկապարտեզի շեմին, ինչպիսի անվստահ քայլերով, երկյուղածությամբ, իսկ այժմ նրանց հստակ խոսքն ու երգը երջանկացնում են ծնողներին, հպարտություն պարգևում մանկապարտեզի ողջ անձնակազմին: Չէ՞ որ յուրաքանչյուր երեխայի հետագա ճակատագրի կերտման գործում մեծ է ոչ միայն ընտանիքի, այլև մանկապարտեզի դերն ու նշանակությունը: Ուստի ծնողների և մանկապարտեզի աշխատակազմի համագործակցությունը պետք է փոխշահավետ լինի և ուղղված երեխաների բարօրությանը:

Երեխաներին և ծնողներին նշանակալից օրվա առթիվ շնորհավորեց մանկապարտեզի տնօրեն Անահիտ Դանիելյանը: Նա մաղթեց, որ Աստծո աջը միշտ հովանի լինի շնորհաշատ մանուկներին, որպեսզի լինեն հայ ազգի հայրենանվեր զավակների արժանի հետնորդները: Միաժամանակ հորդորեց երեխաներին՝ ուր էլ որ լինեն, ուր էլ որ գնան, երբեք չմոռանան տունը, ընտանիքն ու Հայրենիքը:

Մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողները, մանկապարտեզի կոլեկտիվը երբեք չեն մոռանում բարերարներին, որոնց շնորհիվ այսօր Ասկերանում գործում է մանկապարտեզ, և որի հարկի տակ իրենց անհոգ մանկությունն են անցկացնում տասնյակ մանուկներ:

Մանկապարտեզի տնօրենը շնորհակալություն հայտնեց բոլոր բարերարներին, Բասմաջյանների ընտանիքին, Կանադայի և Ամերիկայի ՀԱ ընկերակցություններին, որոնց բարեգործությունների շնորհիվ գործում է մանկապարտեզը: Նա նաև շնորհակալություն հայտնեց մանկապարտեզի ողջ անձնակազմին՝ անմնացորդ նվիրվածությամբ աշխատելու համար, իսկ օրվա կապակցությամբ դաստիարակ Իննա քույրին և դաստիարակ Մարո քույրին երախտագիտություն հայտնեց՝ մանուկների օրն իսկական տոնի վերածելու, նրանց խինդ ու ծիծաղ պարգևելու համար:

Վերջում երեխաներին բաժանվեցին բարերարների կողմից տրամադրված դպրոցական պայուսակներ՝ գրենական պիտույքներով, ինչն արդեն ավանդական բնույթ է կրում:

Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԲԱՆԱԿԸ ԵՎ ՍՊՈՐՏԸ՝ ԵՐԿՎՈՐՅԱԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Բանակն ու սպորտը երկվորյակնե՞ր են, կամ ինչո՞ւ մարզիկները միշտ գերազանց մարտիկներ են: Բանակում ծառայելն ու պրոֆեսիոնալ սպորտը (լինի բարձունքների հասցնող սպորտաձեւ, թե պրոֆեսիոնալ մարտեր սիրողական պարապողների միջեւ) ներքուստ այնքան են իրար մոտ, որ մեկը կարող է փոխարինել մյուսին: Երբ խոսքը ոգու, կամքի ուժի, բնավորության, ինքնավստահության եւ տրված խնդիրների լուծման մասին է, այդ առումով բանակն ու սպորտը միասնական են: Մանուկ հասակից իմանալ, թե ինչ է հրամանը, տրված խնդիրը կատարելը, ինչ է նշանակում չհանձնվել եւ պայքարել մինչեւ հաղթանակ, ինչ է ցավը, ծանրաբեռնվածությունը, վնասվածքը: Ծանր վնասվածք ստանալու վտանգ կա ոչ միայն ռինգում, այլեւ սովորական պարապմունքի ժամանակ: Մենամարտերում թույլատրված են այնպիսի հնարներ, որ կարող են նույնիսկ մահացու լինել մրցակիցների համար: Եվ ահա մահվան կամ ծանր վնասվածք ստանալու վտանգը ստիպում է մարզիկներին պարապել բարձր ինտենսիվությամբ ու պատասխանատվությամբ: Բռնցքամարտով, քիքբոքսով, թայլանդական բոքսով, ձեռնամարտով եւ ուրիշ կոնտակտային մենամարտերով պարապողներին իզուր չեն անվանում մարտիկներ: Ովքե՞ր են մարտիկները: Մարտիկը բանակն է: Սա էլ հենց սպորտի եւ բանակի առաջին նմանությունն է: Երկրորդը կարգապահությունն է: Եվ այստեղ եւ այնտեղ առանց կարգապահության ոչինչ ես: Երրորդը հրամանի կատարումն է: Բանակում հրամանատարի հրամանը չկատարել՝ նշանակում է ռազմական դատարանի առաջ կանգնել ու պատասխան տալ, իսկ սպորտում մարզչինը չկատարելը կտանի վնասվածքի կամ մահվան: Չորրորդն ընդհանուր տրամադրվածությունն է դեպի հաղթանակ: Հինգերորդը կենտրոնացվածությունն է, որն արտահայտվում է ձգված մկաններով եւ ամուր ոգով:

Միշտ նկատելի են անցյալում սպորտով պարապած եւ զինված ուժերում ծառայած մարդիկ: Նրանք նույնիսկ արտաքինով են տարբերվում սովորական մարդկանցից: Իսկ երբ տրված է հրամանը, նրանք կանեն ամեն ինչ ինչպես բանակում, այնպես էլ սպորտում, քանզի հրամանը պետք է միշտ կատարվի, ուրեմն այն կկատարվի, եթե նույնիսկ դրա համար պետք է կյանքը տալ: Ինչպես ասում էր արեւելյան մարտվեստների վարպետ եւ լեգենդար կինոաստղ Բրյուս Լին, եթե ուզում ես մրցակցիդ մահը, պատրա՛ստ եղիր քո մահվանը: Նույնը հանդիպում ենք սամուրայների (ճապոնական զինվորներ) միջնադարյան «Բուսիդո» կոդեքսում: Եվ նույնն էլ մեր իրական կյանքում. ինչպես մարզական, այնպես էլ զինվորական: Որպես արդյունք, երբ պրոֆեսիոնալ մարզիկները մենապայքարի են դուրս գալիս ամենադաժան կանոններով, վնասվածքներ, առավել եւս մահվան դեպքեր չեն լինում: Որովհետեւ նրանք պատրաստված են եւ գիտեն կյանքի գինը: Ռազմական գործողությունների ժամանակ էլ է այդպես: Մեր պատմությունը հարուստ է նվիրյալներով, որոնք ասվածի օրինակ են. ամրության, համարձակության, իսկ կարեւորը՝ հանգիստ եւ հստակ գիտակցության մարմնավորում: Այդ մարդիկ դասակի, մարտկոցի, գնդի կազմում մարտեր են մղել ոչ մեկ անգամ եւ ոչ միայն ողջ ու առողջ են, այլեւ ներողամտությամբ են վերաբերվում այն մարդկանց, ովքեր պատերազմ չեն անցել եւ հարգալից են մեծ սպորտի մարզիկների հանդեպ: Սպորտն ու բանակն են օգնում մարդուն՝ դառնալ իսկական տղամարդ, պաշտպան, մարտիկ:

Մայիսյան հաղթական տոներին ընդառաջ՝ սպորտի եւ զինված ուժերում ծառայության կապի մասին խոսեցինք ԱՀ ԶՈՒ զորամասերից մեկի ֆիզիկական պատրաստության եւ սպորտի բաժնի պետ, ՀՊՄՊՄԴ կիոկուշինկայ կարատե դո մարտարվեստի մարզիչ Արմեն ՊԵՏՐՈՍՅԱՆԻ հետ: Գերազանց տիրապետելով ճապոնական մարտիկներ նախապատրաստելու մարտական արվեստի դժվարագույն հնարներին՝ Արմեն Պետրոսյանը շրջապատողների կողմից ստացել է «Սամուրայ» մականունը: Մանկապատանեական մարզադպրոցի սաներին փոխանցելով արեւելյան մարտարվեստների, իսկ զինվորներին՝ բանակային ձեռնամարտի գաղտնիքներն ու հնարները՝ Արմեն Պետրոսյանն ունի մեկ ընդհանուր նպատակ. պատրաստել հայ ազգի իսկական պաշտպաններ, ձեւավորել ֆիզիկապես եւ հոգեպես կոփված սերունդ:

- Պարոն Պետրոսյան, ի՞նչ է բանակային ձեռնամարտը:

- Բանակային ձեռնամարտը պաշտպանական եւ հարձակման հնարների ուսուցման բազմակողմանի համակարգ է, որն իր մեջ միավորում է աշխարհում հայտնի մենամարտերի տարբեր տեսակներից փոխառված տարրեր, ոտքերի, ձեռքերի, գլխի հարվածային տեխնիկա, մարտական տեխնիկա, ցավեցնող հնարներ, որոնք փորձված են եւ արդյունավետ իրական մարտական գործունեության մեջ: Ժամանակակից եւ արագ զարգացող ռազմամարզական մարզաձեւ է, որտեղ մարտը հիմնականում ընթանում է մրցակցից մերձակա հեռավորության վրա:

- Ինչո՞վ է տարբերվում բանակային ձեռնամարտը մյուս լրիվ կոնտակտային մենամարտերից:

- Բանակային ձեռնամարտում թույլատրվում են ընկած մրցակցին նույնիսկ կանգնած դիրքից ձեռքերով ու ոտքերով խփելու հարվածներ, գլխով գլխին խփելու հնարներ: Բանակային ձեռնամարտը տարբերվում է նաեւ նրանով, որ մարզվողին սովորեցնում են զենքով, զանազան առարկաներով աշխատելու եւ դրանցից պաշտպանվելու հնարներ:

- Արդեն երրորդ տարին է, ինչ սկսել են ՀՀ ԶՈՒ առաջնություններ անցկացնել բանակային ձեռնամարտ մարզաձեւով: Մարտական սպորտի վնասվածքավտանգ այդ ձեւում ինչպե՞ս են դրսեւորում իրենց Ձեր սաները:

- Նշեմ, որ ոչ բոլոր պարապող զինվորներն են կարողանում մասնակցել առաջնություններին: Մասնակցում են հիմնականում նրանք, ովքեր մինչ զինվորական ծառայության անցնելը պարապել են մարտական տարրեր պարունակող որեւէ սպորտով, ունեն լավ ֆիզիկական եւ մարտավարական տվյալներ: Նրանք ավելի լավ են յուրացնում բանակային ձեռնամարտի հնարները, առաջնություններում ցուցաբերում են բարձր մակարդակ: Արդեն երրորդ տարին է, ինչ իմ թիմը մասնակցում է ՀՀ ԶՈՒ բանակային ձեռնամարտի առաջնություններին: Առաջին երկու տարում առաջնային տեղեր գրավեցինք, այս տարի զիջեցինք ու երրորդ տեղ արձանագրեցինք: Առաջնություններին մասնակցող զինվորները կրում են պաշտպանիչ հատուկ հանդերձանք, որն օգնում է խուսափել ծանր վնասվածքներից: Հաշվի առնելով մարզաձեւի կոպտությունն ու վնասվածքավտանգ լինելը՝ նախատեսվել է հետեւյալ պաշտպանիչ հանդերձանքը. մետաղյա ճաղացանցով սաղավարտ, իրանի պաշտպանիչներ, հատուկ ձեռնոցներ, ոտքերի սրունքների պաշտպանիչներ, աճուկապաշտպան խեցի, ըմբշամարտի կոշիկներ:



- Բանակային ձեռնամարտը դասվում է ռազմամարզական մարզաձեւերի շարքը, որի պատճառով դրանով պարապում եւ համապատասխան գիտելիքներ են ստանում զինծառայողները: Քաղաքացիական անձինք այդ մարզաձեւով կոփվելու հնարավորություն չունեն, բայց արդյո՞ք անհրաժեշտություն չէ դա:

- Ես գտնում եմ, որ բոլոր մարզաձեւերով պարապելն էլ անհրաժեշտություն է մեզ համար: Ցանկացած մարզաձեւ, հատկապես երբ նրանում առկա են մարտական տեխնիկայի հնարներ, միտված է մարզվողի ֆիզիկական պատրաստության մակարդակը բարձրացնելուն, մարտունակ զինվոր կոփելուն: Առաջնահերթ խնդիրներից է մերօրյա երիտասարդներին սովորեցնել զենքի հետ ճիշտ վարվելու կանոնները: Ելնելով այդ նկատառումներից՝ ՀՀ-ում, Գյումրիում արդեն գործում է ռազմաբազա, որի ներքո բանակային ձեռնամարտ է ուսուցանվում ոչ միայն զինվորներին: Արցախում առայժմ չկա բանակային ձեռնամարտի ֆեդերացիա կամ խմբակ, բայց մենք ունենք բազմաթիվ տաղանդավոր մարզիկներ, որոնք առաջիկայում գուցե եւ այդպիսի նախաձեռնություն հանձն առնեն:

- Ինչպե՞ս կողմնորոշվել, թե որ մարզաձեւն ընտրել արդյունավետ ինքնապաշտպանություն սովորելու համար:

- Նախ պետք է հասկանալ, թե ինչ նպատակով է երեխան կամ մեծահասակն ուզում ինքնապաշտպանություն սովորել: Մարտարվեստներն ստեղծվել են հենց ինքնապաշտպանության նպատակով: Ելնելով ֆիզիկական կառուցվածքից, բնավորությունից՝ ցանկացողը կարող է ընտրել իրեն համապատասխան մարզաձեւը, գտնել մարզչի, որը նպատակային ուղղորդում կտա: Առհասարակ, սպորտում կոփված մարդն ավելի արագ եւ կենտրոնացած կարող է գործել սթրեսային իրավիճակում: Բանակային ձեռնամարտը վտանգավոր մարզաձեւ է: Մարտական տեխնիկայով եւ պաշտպանական համակարգով այն չի զիջում այլ մարզաձեւերի: Բանակային ձեռնամարտն ունի երկու ուղղություն՝ ռազմամարզական եւ սպորտային: Հիմնականում առաջինն է բանակում կիրառվում: ՊԲ ծառայության մտած զինվորների շարքերում կան տարբեր մարզաձեւերում հաջողության հասած մարզիկներ, որոնք բանակային ծառայության ժամանակ հաջողության հասնելու համար կարողանում են օգտագործել իրենց գիտելիքները: Սպորտը եւ բանակն իրար հետ սերտ կապված են: Իսկ բանակային ձեռնամարտը ծառայում է զորամասերում ռազմակիրառական մարզաձեւերն առավել զանգվածային դարձնելուն, լավագույն մարտիկներին ի հայտ բերելուն, զորամիավորման թիմը համալրելուն, համաբանակային մրցումներում բարձր արդյունք ցուցաբերելուն: Տիրապետելով բանակային ձեռնամարտի գաղտնիքներին՝ հայ երիտասարդը կրկնակի բարձրացնում է հայկական բանակի մարտունակությունը: Ուրեմն՝ սպորտ եւ բանակ: Սա է, թերեւս, մարտիկի արդյունավետ ուղին. այլընտրանք չկա:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՄՐՑԱԴԱՇՏՈՒՄ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՆ» ԷԻՆ

Անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման, բնակչության առողջության ամրապնդման, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացման, նրա միջոցով ընտանեկան կապերի ամրապնդման և առողջ կենսակերպի գաղափարների արմատավորման, ֆիզկուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր

պայմանների ստեղծման, այդ ուղղությամբ կատարվող աշխատանքները խթանելու նպատակով ավանդական է դարձել «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացումը:

Հունիսի 29-ին Ստեփանակերտի Խ.Աբովյանի անվան հ.1 դպրոցի մարզադաշտում կայացավ «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի հանրապետական փուլը: Գլխավոր մրցավար՝ ԿԳՍՆ սպորտի վարչության բաժնի պետ Լևոն Գասպարյանի տեղեկատվությամբ՝ մասնակցում էին շրջանային փուլում 1-ին տեղ

զբաղեցրած ընտանիքները: Բացի Շահումյանի շրջանից մասնակցում էին մայրաքաղաքից և մյուս շրջաններից ընտանիքներ՝ ընդհանուր հաշվով 26: Յուրաքանչյուր ընտանիք ներկայացնում էր հայրը, մայրը և մեկ երեխան: Մրցումներն անցկացվեցին չորս տարիքային խմբերով (ըստ երեխաների) վեց մրցածևերից՝ խաղային փոխանցումավազք՝ 30 մ, վարժություն բասկետբոլի գնդակով, թենիսի գնդակի նետում, խաղային փոխանցումավազք թենիսի գնդակով, հեռացատկ (տեղից), խաղային փոխանցումավազք՝ 80 մ (30 մ, 30 մ, 20 մ): Մրցումներն անցան ակտիվ մրցակցության պայմաններում: Գրեթե բոլոր ընտանիքներն էլ փորձաշատ մասնակիցներ էին:

Առանձին մարզաձևերով 1-ին տեղ գրաված ընտանիքները պարգևատրվեցին դրամական պարգևով: Մրցանակային տեղեր զբաղեցրած ընտանիքները որոշվեցին առանձին մարզաձևերում ձեռք բերած միավորների առավելագույն գումարով: 1-3-րդ տեղեր գրաված ընտանիքները պարգևատրվեցին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության պատվոգրով և դրամական պարգևով: Իսկ հաղթող ընտանիքները՝ Պողոսյանները՝ Շուշիի շրջանից, Շեկյանները՝ Ասկերանի, Աղասյանները՝ Մարտակերտի շրջաններից և Մելքումյանները՝ Ստեփանակերտից, իրավունք նվաճեցին մասնակցելու մրցույթի եզրափակիչ փուլին, որը տեղի կունենա Ծաղկածորում:

Սեփ. լրատվություն

ԳԵՂԱԴԻՏԱԿ

ԱՆՎԵՐՋ ՎԵՐԱԴԱՐՁ ԱՐՎԵՍՏԻ ՆՈՐԱՆՈՐ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

Հունիսի 20-ին Ստեփանակերտի պատկերասրահը մեկնարկել էր մայրաքաղաքի գեղարվեստասեր հանրությանը. առիթը տաղանդավոր քամանչահար Հակոբ Խալաթյանի «Անվերջ վերադարձ. կես դար քամանչայիս հետ» խորագրով միջոցառումն էր՝ մասնակցությամբ Արցախի պետական երգչախմբի (գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ Նինա Գրիգորյան), քանոնահարուհիների քառյակի և սազանդարական եռյակի: Քամանչահարն իր արվեստի երկրպագուների հետ հանդիպման հետաքրքիր ձևաչափ էր ընտրել՝ համադրելով համերգ-զրույցը և իր գեղանկարչական աշխատանքների ցուցադրությունը:

Արդեն երկու տարի է, ինչ վիրտուոզ քամանչահարը հաստատվել է Արցախում՝ ժողովրդական երաժշտարվեստի, հատկապես՝ քամանչա ու քամանի նվագարանների հանդեպ օրեցօր մարող հետաքրքրությունը վերարծարծելու միտումով: 35 տարի Հայաստանի ռադիոյի Արամ Մերանգուլյանի անվան ժողգործիքների վաստակավոր անսամբլում աշխատելուց հետո նա սիրով ընդունեց Արցախի մշակույթի նախարարության առաջարկը և 2017թ. մայիսին տեղափոխվեց Շուշի, իսկ մեկ տարի անց՝ Ստեփանակերտ: Նախանձելի մի ավյունով նա գործի լծվեց՝ աշխատելով Շուշիի Դանիել Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված և Արվեստի դպրոցներում, Ստեփանակերտի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցում և Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջում, նաև՝ Արցախի ժողովրդական նվագարանների նվագախմբում:

Բացելով համերգ-ցուցահանդեսը՝ պատկերասրահի տնօրեն Ելենա Դադայանը շնորհավորեց Հ.Խալաթյանին՝ հատկանշելով, որ կեսդարյա մտերմությունը քամանչայի հետ նշվում է հենց Արցախում, և պատկերասրահի կողմից նվիրեց նկարակալ՝ ի խրախույս նրա գեղանկարչական տաղանդի: Իր հերթին քամանչահարը նվիրեց ձայնասկավառակ՝ Սայաթ-Նովայի երգերով, քամանչայի իր կատարումներով: Համերգը յուրատեսակ ամփոփումն էր 50 տարում քամանչայի հետ նրա անցած ուղու և ձեռքբերումների: Հատկանշական է, որ երաժշտությունն ու գեղանկարչությունը վաղ տարիքից ցայսօր նրա կյանքի անբաժան ուղեկիցներն են և հավասարաչափ սիրելի են թե՛ քամանչայի աղեղը, թե՛ մատիտը: Պատկերասրահում ներկայացված ցուցադրանքը ներառում էր շուրջ չորս տասնյակ աշխատանք՝ բնանկար, նատյուրմորտ, կոլաժ, ինքնադիմանկար: Այստեղ կարելի էր տեսնել իր առաջին նկարից մինչև աշխարհի բազմաթիվ երկրներում համերգային շրջագայությունների ժամանակ արված էտյուդները, որոնք ՄԵՌՁ փոխնախարար Մելանյա Բալայանի խոսքով՝ նրա գեղանկարչական ձիրքի վառ վկայությունն են:

Կյանքի իմաստը տաղանդավոր արվեստագետը համարում է իր թողած հետքն այս աշխարհում: Տակավին ուսումնավարտ 19-ամյա երիտասարդն իր առջև խնդիր էր դրել անել մի նոր բան, ինչը մինչ իրեն ոչ ոք չէր արել: Խոսքը վերաբերում է կատարողական արվեստին. նա փորձեց ընդլայնել քամանչայի հնարավորությունները՝ ազգային նվագարանով հնչեցնելով դասական լուրջ գործեր: Թեպետ նախկինում նման փորձեր եղել են՝ քամանչայով դասական երաժշտություն նվագելու, բայց հետևողականորեն նա զարգացրեց այդ միտումը՝ սկսելով Արամ Խաչատրյանի Ջուբակի կոնցերտից: Նա այն արվեստագետներից է, ովքեր չեն կառչում կարծրատիպերից և մշտապես նոր ուղիների, նոր ոճերի փնտրտուքների մեջ են: Երաժիշտ կատարողը դիմել է ավելի քան տասնյակ կոմպոզիտորների, որպեսզի հատուկ քամանչայի համար ստեղծագործություններ գրեն, և գրել են Ռուբեն Ալթունյանն ու Վաչե Շարաֆյանը: Նա քամանչան օգտագործեց նաև դասական և ժողովրդական տարբեր նվագարանների համակցությամբ, ինչպես օրինակ՝ քամանչա երգեհոնի հետ, տավղի հետ, կիթառի, ջութակի հետ զուգանվագներ, լարային, դաշնամուրային տրիոներ, վոկալի, աշուղական եռյակի և բազմաթիվ այլ դրսևորումներում բացահայտեց գործիքի հնարավորություններն ու ընդլայնեց կիրառությունը՝ կատարելով տարբեր փոխադրություններ: Պատկերասրահում կայացած համերգային ծրագրում էլ այս առումով նորություն կար: Քամանչահարի խոսքով՝ մինչ այդ երգչախումբ չէր ընդգրկել: «Մենք կատարեցինք 17-րդ դարի բանաստեղծ, պոլսահայ աշուղ Պաղտասար Դպիրի «Ի ննջմանեդ արքայական» հայրենասիրական գործը կոմպոզիտոր Ռուբեն Ալթունյանի մշակմամբ»,- անթաքույց ուրախությամբ նշեց քամանչահարը: Ի դեպ, նույն կոմպոզիտորի մշակմամբ հնչեց նաև Սայաթ-Նովայի «Բլբուլի հիդ» երգը Արցախի պետական երգչախմբի կանանց խմբի, քանոնահարուհիների քառյակի, քամանչայի և մենակատար Նուբար Դաղյանի կատարմամբ: Համերգին մասնակցում էին նաև երաժիշտ-մանկավարժի աշակերտներն ու ուսանողները. սազանդարական եռյակի ընդգրկմամբ նա նպատակ ուներ սկիզբ դնել այն ավանդույթի վերականգնմանը, որը ժամանակին լայն տարածում ուներ Արցախում: Մինչև 20-րդ դարի սկիզբը, ավելի քան մեկ դար, արցախածնունդ, հատկապես շուշեցի բազմաթիվ վիրտուոզ երաժիշտների համբավը թնդում էր ոչ միայն հայրենիքում, այլև նրա սահմաններից դուրս: Իրենց կատարողական արվեստով տասնյակ տարիներ նրանք կատարելության չափանիշ են եղել Կովկասի ու հարևան երկրների այլազգի շատ անվանի կատարողների համար: Ուստի սազանդարական եռյակը Հ.Խալաթյանը դիտարկում է որպես միջոց՝ լավագույն ավանդույթները վերականգնելու, ազգային նվագարանները սիրել տալու ու տարածելու:

Համերգային ծրագիրը բացեց մաեստրո Խալաթյանը Սայաթ-Նովայի «Աշխարհումս ախ չիմ քաշի» վիրտուոզ կատարումով՝ մինչ այդ ներկայացնելով վանեցի վարպետի պատրաստած մոտ 100 տարեկան իր գործիքի պատմությունը: Ինչպես արդեն նշեցինք, շփման հետաքրքիր ձևաչափի՝ համերգ-զրույցի շնորհիվ հանդիսատեսը բազմազան հետաքրքիր տեղեկություններ ստացավ թե՛ նրա կյանքի ու գործունեության, թե՛ քամանչայի ու քամանիի մասին (ի դեպ, երկուսի անվանման հիմքում «քաման» բառն է, որը նշանակում է աղեղ): Յուրաքանչյուր կատարում ուղեկցվում էր համապատասխան մեկնաբանություններով ու երաժշտական պատմություններով, որոնք վերաբերում էին իր նվագարաններին, իր սիրելի ուսուցիչ Մարտին Խաչատրյանին (ում դիմանկարը և անձնական իրերից պատրաստված կոլլաժը ցուցադրանքի մաս էին կազմում), իր պատրաստած մեծ ու փոքր քամանիներին, շուշեցի անվանի երաժիշտ կատարողներին, ազգային նվագարանների հանդեպ խորհրդային իշխանությունների վերաբերմունքին և անկախության շրջանում դրանց նոր կյանք ու շունչ հաղորդելու ջանքերին (երբ երաժշտական դպրոցների ժողգործիքների բաժնում ուսումն անվճար էր մի տևական ժամանակաշրջան):

Աշուղ Աշոտի «Օջախում»-ը մաեստրոն նվագեց անվանի երաժիշտ, աշուղական ու ժողովրդական երգերի անզուգական մեկնաբան Օֆելյա Համբարձումյանի ամուսնու՝ Նորայր Հովհաննիսյանի քամանչայով: Ասենք, որ Հ.Խալաթյանը նաև գործիքագործ վարպետ է և իր պատրաստած «Անահիտ» քամանիով (որին իր դստեր անունն է նվիրել) կատարեց համշենահայկական պարերի շարք: Իր կեսդարյա հոբելյանը վարպետը նշանավորել է «Հոբելյանական» կոչվող ալտ քամանիով, որը նույնպես ներկայացրեց հանդիսատեսին և որով կատարեց երեք երգ Կոմիտասից՝ դաշնակահարուհի Մարիենե Բախշիյանի նվագակցությամբ: Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի ուսանողներից կազմված սազանդարական եռյակը կատարեց ժողովրդական պար Մարտին Խաչատրյանի մշակմամբ և արցախյան ժողովրդական «Կալին երգը» ստեղծագործությունը՝ երգով: Դասական երաժշտությունն էլ տեղ ուներ ծրագրում. հնչեցին Էդ. Բաղդասարյանի «Նոկտյուրն»-ը և ժողովրդական երգ՝ «Սիրուհիս» (մշակումը՝ Արմեն և Աշոտ Ջենտերեջյանների): Համերգը եզրափակվեց Գր. Սյունու «Հա կլորի» երգով՝ մասնակցությամբ Հ.Խալաթյանի, սազանդարական եռյակի, քանոնահարուհիների քառյակի, մեներգիչ՝ Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի աշակերտ Վլադիմիր Գալստյան (դասատու՝ Բելա Աղաջանյան): Փոքրիկ երգչի արտիստիզմն ու անմիջականությունը հիացրել էր հանդիսատեսին:

…Թեպետ միջոցառումը վաղուց ավարտվել էր, բայց հանդիսատեսը դժվարությամբ էր բաժանվում պատկերասրահում տիրող ջերմ մթնոլորտից, անցնում էր նկարից նկար՝ հիանալով ինքնուս նկարչի տաղանդով: Շնորհավորենք Հակոբ Խալաթյանին՝ կյանքի այդ հիշարժան հոբելյանը՝ քամանչայի հետ անցկացրած կես դարը այդպես գեղեցիկ արժևորելու և մայրաքաղաքի արվեստասեր հանրությանը դրան մասնակից դարձնելու համար: Մաղթենք նորանոր ստեղծագործական բարձունքներ ու «անվերջ վերադարձ»…

Մելանյա ՄԻԼՈՆՅԱՆ

«ԵՍ ԻՄ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱՌԱՆ ԵՄ»

Ստեփանակերտի Շ.Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի կողմից կազմակերպվեց գրական միջոցառում՝ նվիրված Զինահիդա Բալայանին հոբելյանին: Նույն ինքը՝ Ու ՅՈ ՆԻԿ, նույն ինքը՝ Զինահիդա՝ բանաստեղծ, արձակագիր, գրականագետ:

Կենտրոնի աշխատակից Անահիտ Դանիելյանի փոքրիկ էքսկուրսը միջոցառման հերոսի կյանքի արահետներով հետևյալն է ասում: Ծնվել է Արցախի Վարանդայի Ավետարանոց մելիքանիստ գյուղում: 1979թ. ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը: 1991-ից ԱրՊՀ դասախոս է: 1994թ. ՀՀ ԳԱԱ-ում պաշտպանել է գիտական թեզ՝ «Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը և նրա աղբյուրները» թեմայով, ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: Ներկայումս ԱրՊՀ հայ գրականության և լրագրության ամբիոնի դոցենտ է: 1999-ից ԼՂՀ գրողների միության անդամ է: Իր ակտիվ մասնակցությունն է բերում Արցախի գրական-հասարակական կյանքին՝ հանդես գալով բանաստեղծություններով ու հոդվածներով: Արցախյան ազատագրական շարժման անխոնջ մասնակիցներից է, անմնացորդ նվիրումով կազմակերպում էր ստորագրահավաքներ, մասնակցում հանրահավաքներին, հանդես գալիս ելույթներով: Նրա ընտանիքում բարձր մակարդակի վրա է հայրենիքի և հայրենասիրության գաղափարը: Երկու որդիները՝ Հովիկն ու Մխիթարը, չնայելով իրենց անչափահաս տարիքին, 13 և 16 տարեկանում զինվորագրվել են հայրենիքի պաշտպանությանը՝ անցնելով պատերազմի գեհենով:

1995թ. «Նաիրի» հրատարակչությունը լույս է ընծայել «Շառավիղեալն» քերթվածքների ու պոեմների անդրանիկ ժողովածուն: 2003-ին լույս է տեսել «Վիրակապ չհանդուրժող թևը» պատմվածքների անդրանիկ ժողովածուն, 2004թ.՝ «Արցախը 19-րդ դարի գրականության մեջ և մշակույթում (պատմաբանասիրական-քննական տեսություն)» ընդհանուր խորագիրը կրող ուսումնասիրության առաջին մասը՝ «Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպը» ենթավերնագրով:

ԱրՊՀ հրատարակչությունը հրատարակել է «Մեսրոպ Մաշտոց երևույթը և հայոց ազգային գաղափարաբանության բարդույթը» քննական, գիտամեթոդական ուսումնասիրությունը:

Տպագրության է պատրաստել «Արցախը 19-րդ դարի գրականության մեջ և մշակույթում» ընդհանուր խորագիրը կրող ուսումնասիրության երկրորդ՝ «Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ն ժամանակի հոլովույթում» պատմության քննությունը մեկդարյա հեռավորությունից, երրորդ՝ «Արցախը Ռաֆֆու պատմաբանասիրափիլիսոփայական համակարգում». «Խամսայի մելիքությունները (1600-1827)», ապա 4-րդ՝ «Մուրացանի պատմագեղարվեստական ստեղծագործությունը և նրա պատմական աղբյուրները. «Ռուզան կամ հայրենասեր օրիորդ» դրաման» ու հինգերորդ՝ «Լեոյի «Մելիքի աղջիկը» պատմավեպը» մասերը գիտական նոր՝ մեկնաբանական և արժեքաբանական համակարգով:

Զինահիդայի կերպարն ամբողջացնելու են գալիս գրչընկերներն ու գործընկերները: Արցախի գրական ընտանիքի նահապետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանի գնահատմամբ՝ Զ.Բալայանը լուրջ հայտ է ներկայացրել Արցախի մշակույթի պատմությանը: Աստված Զինահիդային շնորհել է գրական երկերը գիտականորեն ընկալելու և գնահատելու կարողություն: Նրան կարելի է անվանել գրականության տեսաբան: Նա ստեղծել է Արցախի գեղարվեստական պատկերը հայ գրականության պատմության մեջ: Զինահիդան որպես բանաստեղծ, արձակագիր, դասախոս էլ շատ հետաքրքիր է:

Արձակագիր, «Ստեփանակերտ» թերթի խմբագիր Սոֆյա Սարգսյանը, վերլուծելով Զինահիդայի «Վիրակապ չհանդուրժող թևը» գրքույկը, ընդգծեց հեղինակի ինքնատիպ արվեստը:

«Շնորհալի բանաստեղծ է, ոչ սովորական ոճով, բառաստեղծման-բառակերտման միջոցով ստեղծում է մի ուրույն տեսակ, որը բանաստեղծության մեջ առանձնանում է: Գեղագիտորեն հագեցած է, բայց՝ դժվարընկալելի». արձակագիր, բանասիրական գիտությունների թեկնածու Կիմ Գաբրիելյանի բնութագրությունն է: Նրա կարծիքով Զինահիդայի տարերքը գիտությունն է: «Պարտաճանաչ և համբերատար հետազոտող է: Եթե նա ապրեր ոչ թե Ստեփանակերտում, այլ Երևանում, ավելի մեծ հաջողության կհասներ գրականագիտության մեջ»,- ասաց նա՝ հավելելով, որ համեստությամբ հանդերձ՝ Զինահիդայի հետևողականության մեջ նաև համառություն կա, ինչը նրան ավելի ուժեղ է դարձնում: Նրա համոզմամբ՝ հոբելյանը սկսվում է 90 տարեկանից հետո, երբ մարդն արել է ամենակարևորը, և այդ իմաստով Զինահիդան դեռ անելու բան ունի:

Գործընկեր, Աժ պատգամավոր Արզիկ Մխիթարյանը ընդգծեց Զինահիդայի՝ որպես կատարյալ մոր, կերպարը:

ՊԲ Ն զորամասից մայոր Ավետիսյանը իր զինվորների հետ էր եկել շնորհավորելու և հրամանատարության անունից շնորհակալագիր ու պատվոգիր հանձնելու Զ.Բալայանին բանակ-հասարակություն կապն ամրապնդելու, զորամասի հետ իրականացրած բազմաբնույթ և շարունակական համագործակցության համար:

Բազմազբաղ լինելով հանդերձ՝ Զ.Բալայանն ուսանողների հետ հաճախակի է լինում Ստեփանակերտի երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունում, հետաքրքիր դարձնում նրանց առօրյան: Երեկոյին հաստատության ներկայացուցիչը շնորհավորեց և երախտագիտություն հայտնեց հոբելյարին:

«Մայրություն» ՀԿ նախագահ Հասմիկ Միքայելյանը հայրենանպաստ գործունեության համար նրան պարգևատրեց «Մայրական երախտագիտություն» մեդալով:

Իր դասախոսական գործունեության ընթացքում Զ.Բալայանը կյանք է ճանապարհել բազում սերունդների: Իրենց սրտի խոսքն ասացին ԱրՊՀ բանասիրականի ուսանողները՝ արտասանելով նրա ստեղծագործություններից, կատարելով ազգային երգեր ու պարեր՝ մասնակից անելով սիրելի դասախոսին:

Երեկոն հագեցած էր զգացմունքային թանձր տրամադրությամբ: Երգին, պարին հաջորդում էին ասմունքը, խոսքը, գնահատանքը:

Այս ժողովրդին հաղթել կլինի՞. մեծից մինչև փոքր, մամիկից մինչև տատիկ-պապիկ հաղթական են, հաղթական են նաև սարերն ու ձորերը: Այս երկրի դուստրը լինել՝ նշանակում է աշխարհի տերը լինել: Մեր երկրի ճակատագիրը մեզ համար այլ ուղի է գծել: Մենք նուրբ, քնքուշ մայրեր ենք, բայց մարտական ենք: Ես իմ ժողովրդի ծառան եմ: Հազար անկյուններից, հազար չբացված էջերից, հազար ելևէջներից ոգիները քաշքշում են ինձ, ասում են՝ մի վայրկյան հանգիստ մնալու իրավունք չունես: Ես էլ այդ ձայնին ունկնդիր՝ ստեղծում հա՜ ստեղծում եմ իմ ժողովրդի համար, իմ երկրի համար. իմ դիրքապահ տղաների համար:

Բոլորս այս մեծ կռվի մարտիկներ ենք: Բոլորս պետք է մեր հողը սրբազան մասունքի պես պահենք և ասենք՝ այս ժողովրդին հաղթել չի լինի:

Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ-120

ՀԱՆԳ ՈՒ ԳՈՒՅՆՈՎ, ԽՈՐ ՈՒ ԲԱՐՁՐ ԱՐՁԱԿԱԳԻՐԸ



Իր զրույցներից մեկում դառնալով Մարտիրոս Սարյանին՝ Ավ. Իսահակյանն ասել է. «Կոմիտասի երգերի և քո նկարների կապակցությամբ խոսում են իբրև այնպիսի հրաշքի մասին, որն անհնարին է արտահայտել խոսքով: Բայց գիտե՞ս, իմ կարծիքով դա այնքան էլ ճիշտ չէ: Հայաստանում կա մի գրող, որի բառերը երգում են կոմիտասյան հանգով և փայլատակում քո կտավների բոլոր գույներով: Այդ գրողը Ակսել Բակունցն է»: Եվ ապա՝

«Նա մեր արձակի ամենատաղանդավոր ներկայացուցիչն է: Նրա ստեղծագործությունների վրա անհատական կնիք է դրված՝ այնքան թարմ են, այնքան նուրբ են հյուսված այս պատմվածքները, այնպես նուրբ, կարծես հեքիաթ են, կարծես երազ ես տեսնում, այնպես կախարդորեն սուզվում են իրար մեջ անցյալն ու ներկան, որ հուշը դառնում է ներկա, և իրական, ներկան դառնում է երազ»:

Մեր արձակի ամենահինքնատիպ երևույթներից մեկին, որը գրականություն եկավ իր ձեռագրով, մտածողությամբ, ստեղծած նոր աշխարհով, թերևս ոչ մեկն այնպես խտացված ճշգրտությամբ չի ներկայացրել, ինչպես մեր գրականության հսկաներից Վարպետը:

Ակսել Բակունցի ծննդյան 120-ամյակի կապակցությամբ «Գրի-գոր Նարեկացի» համալսարանում (ԳՆՀ) հունիսի 14-ին տեղի ունեցած գրական միջոցառմանը բակունցյան իր բացահայտումը ներկայացրեց ԳՆՀ ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը: Նա սկսեց վերջից, Բակունցի կյանքի վերջին պահերից՝ զուգադրելով հայրենի հողի նկատմամբ Բակունցի սիրո հետ.

«Հուշագիրները պատմում են, որ երբ Բակունցը Գորիսում, որտեղ ծնվել էր, փողոցով անցնելիս հանկարծ տեսնում էր մի հողակոշտ, կռանում վերցնում էր, հոտ քաշում և ասում. «Ոչ մի հող այսպես չի բուրում, չէ՞»: Եվ ապա՝ «Պատմության մեջ արձանագրվել է Բակունցի եղերական մահը, որը եղել է շատ դաժան: Զանգվի ձորում բահը դրել են նրա ձեռքը, ասել են՝ փորիր: Նա փորել է՝ իմանալով, որ իր համար է: Կրակել ու գլորել են այդ փոսի մեջ: Այսպես նա ավարտել է իր այնքա՜ն գեղեցիկ կյանքը: Եվ հաճախ մտածում եմ, թե հողի բուրմունքն այդ պահին ինչ էր ասում Ակսել Բակունցին, մարդուն, որը բահի մասին գրել է, հողի մասին գրել է, հողի և մարդու հարաբերությունը վերածել է անզուգական տողերի»:

Վ.Հակոբյանն անդրադարձավ Բակունցի ու Չարենցի զուգորդությանը: Բակունցն իր սերնդակիցների մեջ տարբերվում էր նաև նրանով, որ թողել է իր հողեղեն արձակը, որից նոր սերունդներ են ծնվել: Իհարկե, մեծ է Չարենցը: Բայց Չարենցն իրենից առաջ ունեցել է հզոր բանաստեղծություն, իսկ Բակունցը դա չի ունեցել: Բակունցն ունեցավ հզոր տղաներ: Լավագույնները՝ Հրանտ Մաթևոսյան և առավել ևս՝ Մուշեղ Գալշոյան: Ըստ Վ.Հակոբյանի՝ հայ նորագույն բոլոր արձակագիրները դուրս են եկել Բակունցի «Ծիրանի փող»-ից: 30-ական թթ. Բակունցը դիմում է էրգրի թեմային և առաջիններից մեկը հայ գրականության մեջ ծիրանի փողը ներկայացնում որպես եղեգան փող, որից Վահագն է ծնվում: Բանախոսը ուշադրություն հրավիրեց պատմվածքի պոետիկային, կառուցվածքին, թեմային ու հերոսների խարակտերային բնավորությանը, որոնք մեր գրականությանը նոր երանգ են տալիս:

Վ.Հակոբյանի գնահատմամբ՝ հայ գրականությունն առանց Բակունցի շատ աղքատ կլիներ: «Սահյանից առաջ բնության մարդուն խոսեցրել է Բակունցը: Նա կարողացավ բնության մեջ խոսեցնել մարդուն և մարդուն տանել դեպի բնություն»,- և Վ.Հակոբյանը նկարագրում է նրա «Անձրևը»: Հողի բուրմունքը, գույները «Ալպիական մանուշակ»-ում որքա՜ն են բարձրացնում մարդուն, տխրության մեջ ինչքա՜ն պայծառ թախիծ կա… Բակունցի նորույթը, անմահությունն այդ ամենի մեջ է. եզրահանգում է բանաստեղծ-գրականագետը:

Միջոցառմանը բակունցյան թեմայով իրենց գրականագիտական պրպտումները ներկայացրին ԳՆՀ դասախոսները:

Նրան ճանաչում են բերել հայրենի բնությունը, հայ գյուղաշխարհը պատկերող «Մթնաձոր», «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուները, որոնցում ամփոփված են «Ալպիական մանուշակ», «Միրհավ», «Խոնարհ աղջիկը», «Նամակ ռուսաց թագավորին», «Ծիրանի փող», «Լառ Մարգարը» և նշանավոր այլ պատմվածքներ: Գրել է նաև գավառական քաղաքի կյանքն ու կենցաղը պատկերող «Կյորես» երգիծական վիպակը, «Խաչատուր Աբովյան», «Կարմրաքար» անավարտ վեպերը: Նրա սցենարներով նկարահանվել են մի շարք կինոնկարներ:

ԳՆՀ գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ժաննա Բեգլարյանը վերլուծեց Բակունցի «Խաչատուր Աբովյանի «Անընդհատ բացակայությունը» բանասիրական աշխատությունը՝ նկատելով, որ Բակունցն առաջին խորհրդահայ գրականագետն է, որ հետազոտեց մեծ լուսավորչի արխիվը, ու հենց այդ համահավաք տվյալներն են տեղ գտել նրա աշխատության մեջ, և այդ իսկ առումով նա շոշափելի ծառայություն է մատուցել աբովյանագիտությանը:

ԳՆՀ կարիերայի բաժնի պատասխանատու Անի Շիրինյանն անդրադարձավ Բակունցի բնապատկերային քնարերգությանը՝ ընդգծելով, որ նա օժտված է բնության հետ խոսելու մեծ արվեստով. «Նրա գրվածքներում բնականը գեղարվեստական հյուսվածքի կարևոր մաս է: Մարդու ճախրանքներն ու անկումները նա որոնում է բնության մեջ, բնապատկերի ներսում ծավալվող շարժումներում արծարծվում է ժամանակի հավերժության մեր պատկերացումը, և անկախ նրանից, թե ինչպես կծավալվեն գործողությունները, բնությունը մնում է վեհ և գեղեցիկ»:

Բանասիրական գիտությունների թեկնածու Նանար Սիմոնյանը վերլուծեց մարդու դրաման «Մթնաձոր» ժողովածուում, որն ընթերցողի առջև բացում է մարդկային ապրումների, հույզերի ու զգացմունքների մի ամբողջ պատկերասրահ:

Բանաստեղծ Ռոբերտ Եսայանը մասնակցել է Գորիսում տեղի ունեցած բակունցյան միջոցառումներին և ներկայացրեց իր տպավորությունները:

«Իմ մեջ, հավատացեք, տխրություն շատ կա: Բայց թախիծը մտնում է ընթերցողի հոգու վերքերը և իր գործը անում, երբ ներքուստ անհայտ, անհասկանալի մի անկյունից լուսավորված է, պայծառացած»,- Բակունցի այս խոստովանության՝ «Նրա թախիծը նաև մեր հոգիներում է, Բակունցով մենք զուլալվում ենք» Ա. Գրիգորյանի եզրահանգումը բոլորի զգացմունքների ընդհանրացումն է:

ՆԵՐՇՆՉՎԱԾ ԲԱԿՈՒՆՑՈՎ

Հունիսի 13-ին լրացավ մեծանուն արձակագիր Ակսել Բակունցի ծննդյան 120-ամյակը: Այդ կապակցությամբ Ստեփանակերտի Մուրացանի անվան քաղաքային գրադարանն ընթերցողների ուժերով կազմակերպեց գրական ցերեկույթ: Այն բացեց գրադարանի տնօրեն Մարիա Խաչատրյանը՝ նշելով, որ հավաքվել են հիշելու և մեծարելու, գրական անբավ ժառանգություն թողնելու համար երախտագիտության տուրք մատուցել մեծ գրողի հիշատակին: Կ.Զելենսկու խոսքը, որ նա մեջբերեց, այն մասին է, որ Բակունցը կատարելապես ազգային գրող է, և հայ ազգային յուրահատկությունը ճանաչելու համար նրա ստեղծագործություններն ավելի բան են տալիս, քան բազմաթիվ գիտական աշխատություններ:

Բակունցն անցյալ դարի 30-ականների դժնդակ ժամանակներին զոհ դարձած հայ գրողներից է: Նա ապրեց ընդամենը 38 տարի: Հազիվ ունեցավ մեկ տասնամյակի գրական կյանք, սակայն ստեղծեց գրական գոհարներ, որոնք տարիների հետ ավելի են փայլատակում իրենց գույներով:

Գրողի կյանքի փակագծերը բացեցին գրադարանի ակտիվ ընթերցողներ՝ մայրաքաղաքի հ.8 միջնակարգ հոսքային դպրոցի աշակերտները:

Ա. Բակունցը ծնվել է 1899թ. Գորիսում: Տեղի ծխական դպրոցից հետո ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտը (ի դեպ, 120-ամյակի կապակցությամբ այստեղ բացվել է նրա հուշատախտակը), 1918թ. կամավորական խմբերի կազմում մասնակցել է Էրզրումի, Կարսի կռիվներին, Սարդարապատի հերոսամարտին:

Աշխատել է ուսուցիչ Սիսիանի Լոր գյուղում, ապա՝ Զանգեզուրի գյուղատնտես, այնուհետև Երևանում՝ հողժողկոմատում:

Անմեղ նահատակ, սև ցելերի սերմնացան, խոսքի ազնիվ վարպետ, մեր արձակի նրբաճաշակ վարպետ, հայ արձակի Տերյան. Բակունցի մասին մեծերից հղումը դպրոցականները համեմեցին նրա «Խոնարհ աղջիկը», «Միրհավ», «Ալպիական մանուշակ», «Նամակ ռուսաց թագավորին», «Լառ Մարգարը» և այլ ստեղծագործություններով: Ներկաների հիացական ծափերին արժանացավ վարողներից Նորայր Բաբայանի ներշնչող արտասանությունը՝ Բակունցին նվիրված Հ.Սահյանի բանաստեղծությունը.

Դու կանգնած էիր հայրենի հողին,
Նրանից բուսած ծառ էիր կարծես,
Գյազբելի նման բարձր էր քո հոգին,
Եվ խոր էր, խորունկ, Մթնաձորի պես…

Բակունցը շատ լավ Կոմիտաս էր երգում: Չարենցն իր փոթորկուն հոգին հանգստացնում էր Բակունցի երգը լսելով: Եվ միջոցառմանը աշակերտուհու կատարմամբ հնչեց Կոմիտասի երկու երգ:

Դպրոցականներին շարունակեցին դահլիճում նստածները: ԱՀ վաստակավոր մանկավարժ Նաիրա Թամրազյանի ելույթը հուզառատ էր: «Ես նորից Բակունցի հետ և՛ հերոսացա, և՛ զինվոր դարձա, և՛ նորից՝ ուսուցիչ, և՛ հայրենասեր, և՛ գեղեցիկը տեսնող, գեղեցիկն ընկալող մարդ, բայց ավելի շատ այսօր այս ամենի հետ ես նրա հետ նույն Գողգոթան անցա, ողբերգական այն ճանապարհը, որ 38 տարեկան հասակում կյանքով լցված, կյանքին սիրահարված, իր հայրենի հող ու թփին անմնացորդ նվիրված Բակունցը արևոտ, պայծառ հուլիսյան մի օր ոչ թշնամու, այլ հայի ձեռքով կորսվեց: Եվ այսօր մեր անթաղ շատ գրողների նման Բակունցն էլ չունի գերեզման: Դա դաս պիտի լինի բոլոր դարերում՝ հայը հայի նկատմամբ…»: Նա նշեց, որ տարիներ շարունակ ինքը Բակունցով սերունդներ է կրթել, նրա Մարդ տեսակով. «Կարդում ես ու չես հագենում, կարդում ես ու ներշնչվում ես, կարդում ես ու հպարտանում, որ այն ազգի ներկայացուցիչն ես, որը Բակունց է ծնել»:

Բանասիրական գիտությունների թեկնածու, ԱրՊՀ դոցենտ Սիրուն Բաղդասարյանն ընդգծեց Բակունցի քնարական արձակագիր լինելը. «Կարդում ես նրա ստեղծագործությունները, և թվում է՝ արձակ բանաստեղծություններ ես ընթերցում»: Նշեց, որ Բակունցը ստեղծել է Մթնաձորի կերպարն այնպես, ինչպես Թումանյանը՝ Լոռվա աշխարհը, Թոթովենցը՝ Խարբերդը և այլն, գրողի յուրօրինակ պաշտամունքը մայրենի լեզվի նկատմամբ: Դա առանձնապես երևում է նրա «Կյորես» վիպակից: «Ես շատ քիչ եմ տեսել, որ մեր բարբառը այդպես խնկարկվի» (Ղարաբաղի բարբառը մոտ է Զանգեզուրի բարբառին) և ի հավելումն ասածի՝ կատարեց «Հայոց լեզու» երգը:

Ներկաները շնորհակալություն հայտնեցին գրադարանի անձնակազմին տնօրենի գլխավորությամբ՝ Բակունցի 120-ամյակի կապակցությամբ մտերմիկ և ջերմ մթնոլորտում իրենց գրական-գեղարվեստական վայելք պարգևելու համար:

Վ. ՕՍԻՊՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3000: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 29.06.2019թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: